



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՆՑՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 02(422) «15» փետրվարի 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
35	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 20-ի N 381 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 30-Ն որոշումը.....	5
36	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N 615-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 31-Ն որոշումը.....	6
37	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի N 209-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 32-Ն որոշումը.....	7
38	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 46-Ն որոշումը.....	8
39	«Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 47-Ն որոշումը.....	9
40	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 51-Ն որոշումը.....	16
41	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 17-ի N 273-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 52-Ն որոշումը.....	18
42	«Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 626-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 56-Ն որոշումը.....	20

43	«Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամը վերակազմակերպելու, «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը վերանվանելու, «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի կանոնադրությունը և հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 30-ի N 859-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 12-ի N 538-Ա և Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 7-ի N316-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 57-Ն որոշումը.....	23
44	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի N 451 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 61-Ն որոշումը.....	.36
45	«Պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 65-Ն որոշումը.....	38
ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
46	«Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 15-ի N 61-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 1-Ա որոշումը.....	39
47	«Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի մարտի 27-ի N 4-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 2-Ա որոշումը.....	40
48	«Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 58-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 3-Ա որոշումը.....	42
49	«Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 29-ի N 22-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 4-Ա որոշումը.....	43
50	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային	

	ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 61-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 5-Ա որոշումը.....	45
51	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 17-ի N 58Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 6-Ա որոշումը.....	46
52	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 17-ի N 59Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 7-Ա որոշումը.....	47
53	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 5-ի N 14-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 8-Ա որոշումը.....	48
54	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2021 թվականի անվանական կազմը և կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաստատելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 14-Ն որոշումը.....	49
ՏԱՍՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
55	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի N 65-Ն որոշումը.....	52
56	«Տնտեսությունների հաշվառման Ձև N 1 «Համայնքի գիրքը» հաստատելու մասին» ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի N 66-Ն որոշումը	53
57	«Հաշվառման Ձև N 2 «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» հաստատելու մասին» ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի N 67-Ն որոշումը.....	60
58	«Տնտեսությունների հաշվառման Ձև N 3 «Այբբենական գիրքը» հաստատելու մասին» ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի N 68-Ն որոշումը.....	63
59	«Տնտեսությունների հաշվառման Ձև N 1 «Համայնքի գիրքը», հաշվառման Ձև N 2 «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» և տնտեսությունների հաշվառման Ձև	

	N 3 «Այբբենական գիրքը» վարելու ցուցումները հաստատելու մասին» ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի N 69-Ն որոշումը.....	66
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
60	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2017 թվականի մարտի 6-ի N 13-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ արդարադատության նախարարի N 14-Ն հրամանը.....	79
61	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 08 հրամանը	81
62	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրի գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 15 հրամանը	82

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2021թ.

N 30-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N 381 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 381 որոշման՝

1) 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեին» բառերով.

2) հավելվածի 19-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2021թ.

N 31-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնողների և արտակարգ իրավիճակների պետական ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը և վճարման կարգը սահմանելու մասին» N 615-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետի 1.1-ին ենթակետում «հավելվածի» բառից հետո լրացնել «(գաղտնի)» բառը.

2) որոշման 1-ին կետի 1.1-ին ենթակետով սահմանված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի (գաղտնի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունիսի 11-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2021թ.

N 32-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 209-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի դրույթները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 14-ի N 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 209-Ն որոշման.

1) 2-րդ կետի 3-րդ ենթակետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության» բառերով.

2) հավելվածի «Ծանոթություն» բաժնում ավելացնել նոր նախադասություն, հետևյալ բովանդակությամբ՝

«2020-2021 թվականների համար նախատեսված վառելափայտի բացթողման գները և առանձնահատկությունները սահմանվում են պետական լիազոր մարմնի կողմից, որը չի կարող գերազանցել Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վառելափայտի բացթողման գները»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա 1-ին կետի 2-րդ ենթակետի գործողությունը տարածվում է 2020 թվականի նոյեմբերի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 փետրվարի 2021թ.

N 46-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 27-րդ կետի 1-ին ենթակետում «10» թիվը փոխարինել «20» թվով.

2) N 2 աղյուսակի «Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2020 թվականի համար» աղյուսակում՝ 13-րդ և վերջին տողերում, «2500» թիվը փոխարինել «1250» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի դեկտեմբերի 21-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 փետրվարի 2021թ.

N 47-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2021-2022 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ց Ա Ն Կ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2021-2022
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցու- թային
1	2	3	4	5	6
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ(գ)*
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն				
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)**		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	• 011401.24.6 Կենսաբանություն և քիմիա	Կ(գ)կամ Ք(գ)	Ք(գ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
	• 011401.25.6 Մաթեմատիկա և Ֆիզիկա	Մ(գ)կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
031301.00.6	Հոգեբանություն				
	031301.01.6 Հոգեբանություն	Հլգ(գ)	Կ(գ)**		Օտլ(գ)*
041201.00.6	Ֆինանսներ				
	041201.01.6 Ֆինանսներ /բստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
041301.00.6	Կառավարում				
	041301.01.6 Կառավարում /բստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
042101.00.6	Իրավագիտություն				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

• - Նշված մասնագիտություններով առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)**		Օտլ(գ)*
041101.00.6	Հաշվապահական հաշվառում և հարկում				
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
053101.00.6	Քիմիա				
	053101.02.6 Դեղագործական քիմիա	Կ(գ) կամ Ք(գ)	Ք(գ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
061101.00.6	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)				
	061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

2. «ՇՈՒՇԻՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
071403.00.6	Ռադիոտեխնիկա և կապ				
	071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
073101.00.6	Ճարտարապետություն				
	073101.01.6 Ճարտարապետություն	Գծ	Նկ		Հլգ(գ)*
073201.00.6	Շինարարություն				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	Ագրոնոմիա				
	● 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*
084101.00.6	Անասնաբուծություն				
	● 084101.01.6 Անասնաբուծություն	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*

● - Նշված մասնագիտություններով առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Սրցության			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041801.00.6	Ազոտիզին				
	041801.01.6 Ազոտիզին և ֆինանսներ	Մ(զ)	Հլ(զ)		Օտլ(զ)*
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(զ)	Ֆ(զ)**		Հլ(զ)*
071301.00.6	Էներգետիկա				
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	Մ(զ) կամ Ֆ(զ)	Ֆ(զ)** կամ Մ(զ)**		Հլ(զ)*
071601.00.6	Տրանսպորտային համակարգեր				
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(զ) կամ Ֆ(զ)	Ֆ(զ)** կամ Մ(զ)**		Հլ(զ)*
071602.00.6	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ				
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(զ)	Ֆ(զ)**		Հլ(զ)*
073201.00.6	Շինարարություն				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(զ) կամ Ֆ(զ)	Ֆ(զ)** կամ Մ(զ)**		Հլ(զ)*
081101.00.6	Ազոտումիա				
	081101.01.6 Ազոտումիա, սելեկցիա և գենետիկա	Մ(զ) կամ Կ(զ)	Կ(զ)** կամ Ք(զ)**		Հլ(զ)*

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2202	Տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր (հիմնական կրթությամբ)
2912	Ջրամատակարարում և ջրահեռացում (հիմնական կրթությամբ)
2916	Քաղաքաշինական կադաստր (հիմնական կրթությամբ)
3102	Գյուղատնտեսագիտություն (հիմնական կրթությամբ)
3104	Անասնաբուժություն (հիմնական կրթությամբ)
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)

**3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
3.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Սրցության			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլ(զ)	Մ(զ)**		Օտլ(զ)*
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն				

	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(զ)	Հլզ(զ)		Օտլ(զ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլզ(զ)	ՀՊ(զ)**		Օտլ(զ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(զ)	Հլզ(զ)		ՀՊ(զ)*
031101.00.6	Տնտեսագիտություն				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(զ)	Հլզ(զ)		Օտլ(զ)*
031801.00.6	Միջազգային հարաբերություններ				
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ***	Հլզ(զ)	ՀՊ(զ)		Օտլ(զ)*
042101.00.6	Իրավագիտություն				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլզ(զ)	ՀՊ(զ)		Օտլ(զ)*
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(զ)	Ֆ(զ)**		Հլզ(զ)*

3.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլզ(զ)	Մ(զ)**		Օտլ(զ)*
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(զ)	Հլզ(զ)		Օտլ(զ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլզ(զ)	ՀՊ(զ)**		Օտլ(զ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(զ)	Հլզ(զ)		ՀՊ(զ)*
031101.00.6	Տնտեսագիտություն				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(զ)	Հլզ(զ)		Օտլ(զ)*
031801.00.6	Միջազգային հարաբերություններ				
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ***	Հլզ(զ)	ՀՊ(զ)		Օտլ(զ)*
042101.00.6	Իրավագիտություն				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլզ(զ)	ՀՊ(զ)		Օտլ(զ)*
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(զ)	Ֆ(զ)**		Հլզ(զ)*

3.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0207	Թարգմանչություն և գործավարություն (հիմնական կրթությամբ)
0302	Հայոց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0303	Ռուսաց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0307	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ)
0312	Դասավանդում տարրական դասարաններում (հիմնական կրթությամբ)
0313	Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ)
0416	Ատամնատեխնիկական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ֆինանսներ, կառավարում) (հիմնական կրթությամբ)
0602	Մենեջմենթ (կառավարում) (հիմնական կրթությամբ)
0603	Ֆինանսներ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2203	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ)
2307	Զբոսաշրջություն (հիմնական կրթությամբ)
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

4. «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ(գ)*
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն				
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)**		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
022802.00.6	Կովկասագիտություն				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
023201.00.6	Լեզվաբանություն				
	023201.01.6 Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	Տնտեսագիտություն				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
041301.00.6	Կառավարում				
	041301.01.6 Կառավարում /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
042101.00.6	Իրավագիտություն				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
061104.00.6	Տեղեկատվական համակարգեր				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ)**		Օտլ(գ)*

4.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ(գ)*
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն				
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)**		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
022802.00.6	Կովկասագիտություն				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
023201.00.6	Լեզվաբանություն				
	023201.01.6 Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	Տնտեսագիտություն				

	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
041301.00.6	Կառավարում				
	041301.01.6 Կառավարում /բար ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	Իրավագիտություն				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061104.00.6	Տեղեկատվական համակարգեր				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Օտլ (գ)*

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՑՈՒՐՁՑԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԿԵՍՏԻ ԻՆՏԵՏՈՒՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
021201.00.6	Դիզայն				
	021201.01.6 Դիզայն	Կոմպ	Գծն և Գն		Հլգ(գ)*
	021201.03.6 Հազուստի մոդելավորում	Կոմպ	Գծն և Գն		Հլգ(գ)*

Օգտագործված հապավումներ

(բ)	Բանավոր	Կոմպ	Կոմպոզիցիա
(գ)	Գրավոր	ՀՊ	Հայոց պատմություն
Ա	Աշխարհագրություն	Հլգ	Հայոց լեզու և գրականություն
Անգլ	Անգլերեն	Մ	Մաթեմատիկա
Գծ	Գծագրություն	Մասն.	Մասնագիտական
Նկ	Նկարչություն	ՆԶՊ	Նախնական զինվորական պատրաստություն
Գծն	Գծանկար	Ոլ	Ռուսաց լեզու
Գն	Գունանկար	ՍԱ	Ստեղծագործական աշխատանք
ԸՊ	Ընդհանուր պատմություն	Ք	Քիմիա
ԸՖՊ	Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն	Օտլ	Օտար լեզու****
Կ	Կենսաբանություն	Ֆ	Ֆիզիկա

Օ ա ն թ ու յ ու ն ն ք

*Ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

**Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցութային մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

*** Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն:

**** Օտար լեզու (Ռուսաց լեզու, Անգլերեն, Գերմաներեն, Ֆրանսերեն):

Օտար լեզու մրցութային կամ ոչ մրցութային քննություն կարող է ընտրվել նշված 4 առարկաներից մեկը՝ դիմորդի հայեցողությամբ:

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 փետրվարի 2021թ.

N 51-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ մ ւ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչությունը Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական գործակալության վերակազմակերպելու և գործակալության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» N 969-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, որոշմամբ հաստատված N N 1, 2 հավելվածների վերնագրերում «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՑԻ ՀԱՐՑԵՐԻ» բառերով.

2) որոշման 1-4-րդ կետերում, որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-2-րդ կետերում, 6-րդ կետի 1-ին ենթակետում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ռուսերեն լրիվ՝ Государственное агентство социального обеспечения министерства труда, социальных и миграционных вопросов Республики Арцах»:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության բաժինը Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության գործակալության վերակազմակերպելու և գործակալության կանոնադրությունը հաստատելու մասին» N 328-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրի «ԲԱԺԻՆԸ» բառից հետո, որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրում «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՑԻ ՀԱՐՑԵՐԻ» բառերով.

2) որոշման 1-ին կետի «վերակազմակերպել» բառից հետո, 2-3-րդ կետերում, որոշմամբ հաստատված հավելվածի 1-2-րդ կետերում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի»

բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 փետրվարի 2021թ.

N 52-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 17-Ի N 273-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 17-ի «Պետական նպաստների, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 20-ի N 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 273-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N N 1, 3 հավելվածների 5-րդ կետերում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերով.

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

ա. 3-րդ կետի աղյուսակի 2-րդ կետում «2.5» թիվը փոխարինել «4.5» թվով,

բ. 12-րդ կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերությունում «ծնվելու օրվանից» բառերը փոխարինել «ծնվելու ամսվանից» բառերով,

գ. 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի «ա»-«ը» պարբերություններում նշված երեխաներին սույն կարգի 7-րդ կետում նշված անձանց ընտրությամբ նշանակվում է մեկ նպաստ:».

3) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3-4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Միանվագ նպաստի գործակիցներն են.

1) 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 3.0, իսկ երեխայի ծննդյան պահին ծնողներից մեկը կամ միակ ծնողը բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված լինելու դեպքում՝ 5.0.

2) 3-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 5.0.

3) 4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 7.0:

4. Միանվագ նպաստ ստանալու համար սույն կարգի 2-րդ կետում նշված անձինք գրավոր դիմում են իրենց մշտական հաշվառման վայրի կամ զինվորական ծառայության կամ փաստացի բնակության վայրի Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններ (այսուհետ՝ գործակալություն)՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) երեխայի ծննդյան վկայականը և դրա պատճենը, իսկ ծնվելուց հետո չորս շաբաթվա ընթացքում մահացած երեխայի համար՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տված ծննդի պետական գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթուղթը և դրա պատճենը.

2) տեղեկանք բնակության վայրի և ընտանիքի կազմի մասին.

3) խնամակալության կամ որդեգրման մասին փաստաթուղթը և դրա պատճենը.

4) ծնողի կամ խնամակալի կամ որդեգրողի անձը հաստատող փաստաթուղթը և դրա պատճենը.

5) ծնողի կամ խնամակալի կամ որդեգրողի հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը և դրա պատճենը.

6) երեխայի ծննդյան պահին ծնողներից մեկի կամ միակ ծնողի հաշմանդամության մասին բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից տրված փաստաթուղթը և դրա պատճենը:»:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Մույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված գործակիցներով երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է 2021 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխաների համար:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 փետրվարի 2021թ.

N 56-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 626-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 1-ի «Արցախի Հանրապետության բնակչության կոմունալ ծառայությունների փոխատուցման աջակցության միջոցառումը հաստատելու մասին» N 626-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) որոշման 2-րդ կետում «էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և ենթակառուցվածքների» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ ՈՒ Մ
ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԱԼ
ՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՆԱՏՈՒՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Արցախի Հանրապետության բնակչության կոմունալ ծառայությունների փոխհատուցման աջակցության միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) նպատակն է աջակցել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով սոցիալական խնդիրների առջև կանգնած Արցախի Հանրապետության բնակչությանը:

2. Միջոցառման շահառու են բնական գազի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման, բջջային և ինտերնետ կապի պայմանագիր կնքած Արցախի բնակիչ բաժանորդները:

3. Աջակցությունը (փոխհատուցման ենթակա) տրամադրվում է 2020 թվականի դեկտեմբեր ամսվա և 2021 թվականի բոլոր ամիսների համար:

4. Մեկ բնակիչ բաժանորդի համար աջակցության առավելագույն չափը սահմանվում է հետևյալ կերպ.

1) 2020 թվականի դեկտեմբեր ամսվա և 2021 թվականի համար՝ Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքում մատուցվող բջջային կապի ծառայությունների գծով՝ մինչև **180** րոպե և մինչև **50** հատ SMS հաղորդագրություն.

2) 2020 թվականի դեկտեմբեր ամսվա և 2021 թվականի համար՝ ինտերնետ կապի ծառայության գծով՝ մինչև **1** Մբ/վրկ արագություն.

3) 2020 թվականի դեկտեմբեր և 2021 թվականի հունվար, փետրվար, մարտ և դեկտեմբեր ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև **180** խմ ներառյալ,

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **500** կվտ*ժ ներառյալ.

4) 2020 թվականի դեկտեմբեր ամսվա համար չգազաֆիկացված բնակավայրերի և համայնքների չգազաֆիկացված թաղամասերի, փողոցների բնակիչ բաժանորդների էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **15 000** ՀՀ դրամի չափով.

5) 2021 թվականի հունվար, փետրվար, մարտ և դեկտեմբեր ամիսների համար՝ չգազաֆիկացված բնակավայրերի և համայնքների չգազաֆիկացված թաղամասերի, փողոցների բնակիչ բաժանորդների էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **1500** կվտ*ժ ներառյալ.

6) 2021 թվականի ապրիլ, մայիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև **120** խմ ներառյալ,

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **400** կվտ*ժ ներառյալ,

գ. չգազաֆիկացված բնակավայրերի և համայնքների չգազաֆիկացված թաղամասերի, փողոցների բնակիչ բաժանորդների էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **1000** կվտ*ժ ներառյալ.

7) 2021 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև **60** խմ ներառյալ,

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **300** կվտ*ժ ներառյալ,

գ. չգազաֆիկացված բնակավայրերի և համայնքների չգազաֆիկացված թաղամասերի, փողոցների բնակիչ բաժանորդների էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **600** կվտ*ժ ներառյալ.

8) 2020 թվականի դեկտեմբեր ամսվա և 2021 թվականի համար՝ Բերձորի 10 կՎ ՕԳ-ից սնուցվող Բերձոր, Աղավնո, Ներքին Սուս, Հին Շեն, Մեծ Շեն, Տասը Վերաս, Կանաչ Թալա, Լիսագոր, Եղցահող բնակավայրերի էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ ամբողջությամբ:

5. Այն բնակիչները, ովքեր համատեղությամբ վարձակալական հիմունքներով են բնակվում և հանդիսանում են որպես մեկ բնակիչ բաժանորդ, կստանան սույն միջոցառման 4-րդ կետում նշված սահմանաչափերին համարժեք դրամական փոխհատուցում՝ համատեղությամբ վարձակալությունը հավաստող փաստաթղթերն Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթկառուցվածքների նախարարություն ներկայացնելուց և հաշվառելուց հետո:

6. 2021 թվականի համար ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության վճարը փոխհատուցվում է ամբողջ չափով:

7. Սույն միջոցառման 4-րդ կետի համաձայն որոշված սահմանաչափի ընդհանուր գումարները փոխանցվում են մատակարարող ընկերություններին, միջոցառման շահառու համարվող բնակիչ բաժանորդների կողմից սպառված ծառայությունների ծավալների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելուց հետո՝ Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված կարգով և ձևով:

8. Սույն միջոցառման 4-րդ կետի համաձայն որոշված սահմանաչափի ընդհանուր գումարները փոխհատուցվում են Արցախի Հանրապետության պետական բյուջեի կամ այլ միջոցների հաշվին: Համատեղությամբ վարձակալական հիմունքներով բնակվող բնակիչներին դրամական փոխհատուցումը տրվում է նրանց անհատական հաշիվներին՝ փոխանցմամբ, իսկ 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված գումարները՝ մատակարար կազմակերպությանը:»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՍՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 փետրվարի 2021թ.

N 57-Ն

ք. Ստեփանակերտ

**«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՍԸ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ԱՐՑԱԽԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՍԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, «ԲԱՐՁՐ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՍԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԻ
ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 859-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-
Ի N538-Ա ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N316-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» օրենքի 29-րդ և 31-րդ հոդվածները և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ք ո շ ու մ է.**

1. «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամը միացման ձևով վերակազմակերպել «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի, իսկ «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը վերանվանել «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի:

2. Սահմանել, որ՝

1) «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամը «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի իրավահաջորդն է՝ միացման պայմանագրի և փոխանցման ակտի համաձայն:

2) «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի՝ հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման մարմինն Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչությունն է:

3. Հաստատել՝

1) «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն N1 հավելվածի:

2) «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը՝ համաձայն N2 հավելվածի:

3) «Ռազմավարական պլանավորման կենտրոն» և «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամների միացման պայմանագիրը և փոխանցման ակտը՝ համաձայն N3 հավելվածի:

4. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետին՝ ապահովել «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի գործունեության դադարման պետական գրանցումը՝ «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի միջոցների հաշվին:

5. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների

կենտրոն» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N859-Ն որոշման 2-րդ և 4-րդ կետերը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 12-ի «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու մասին» N538-Ա որոշումը.

3) Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 7-ի «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամ հիմնադրելու մասին» N316-Ն որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Հիմնադրամը հանդիսանում է «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի իրավահաջորդը՝ միացման պայմանագրի և փոխանցման ակտի համաձայն:
3. Հիմնադրամը ստեղծվել է Քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջներին համապատասխան: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:
4. Հիմնադրամի հիմնադիրն է Արցախի Հանրապետությունը՝ ի դեմս Արցախի Հանրապետության կառավարության: Հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինն է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչությունը:
5. Հիմնադրամի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամ, ռուսերեն՝ Фонд «Центр высоких технологий и стратегического планирования», անգլերեն՝ «High technologies and strategic planning center» fund:
6. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանավերտ, Կամո 4:
7. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ է:
8. Հիմնադրամի շահառուներն են ֆիզիկական և իրավաբանական անձինք:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Հիմնադրամի գործունեության նպատակներն ու խնդիրներն են՝
 - 1) Արցախի Հանրապետության երկարաժամկետ անվտանգությունը, հասարակության բարեկեցությունը պահպանելը և զարգացնելը, Արցախի կայուն զարգացմանը նպաստելը, ազգային արժեքները պահպանելը և աշխարհաքաղաքական տարբեր իրավիճակներում Արցախը անխոցելի դարձնելը.
 - 2) Ռազմավարական պլանավորման համակարգ ստեղծելը, որը հնարավորություն կտա սահմանել Արցախի Հանրապետության ցանկալի ապագան և դրան հասնելու մեխանիզմները, սահմանելու առաջնահերթությունները, երկրում առկա մարդկային կարողությունները և դրանց զարգացումը.
 - 3) համախմբման մշակույթ ստեղծելը՝ տարբեր իրավիճակներում երկրում առկա հնարավորությունները նույնաժամանակ համակարգելու, կարևոր ռազմավարական նշանակության հարցերում քաղաքական կայունության համակարգ ստեղծելու համար հանուն ազգային նպատակների.
 - 4) Արցախի Հանրապետության կառավարությանն աջակցություն ցուցաբերելը՝ միջազգային մշակութային կապերի հաստատման և ընդլայնման, սփյուռքի ներուժի համախմբման հարցում.
 - 5) Արցախի Հանրապետության կառավարությանն աջակցություն ցուցաբերելը՝ միջազգային հարաբերություններում և տարբեր հարթակներում ձևավորելով Արցախի ազգային բրենդ.
 - 6) հակամարտությունների կառավարման և բանակցային ռազմավարության ոլորտներում հետազոտություններ իրականացնելը.

7) Արցախի Հանրապետության կառավարությանն աջակցություն ցուցաբերելը՝ տարբեր ոլորտներում ռազմավարական տեսլականի և ռազմավարության պլանավորման հարցում.

8) Արցախի Հանրապետության կառավարության համար ռազմավարական հայեցակարգեր կամ ծրագրեր մշակելը, մշակման գործընթացը համակարգելը և դրանց իրականացմանն աջակցելը.

9) Արցախի Հանրապետության կառավարության և Արցախի Հանրապետության բնակչության հետ քննարկումների, հանդիպումների միջոցով ռազմավարական պլանավորման վերաբերյալ հաղորդակցությունն ապահովելը.

10) Արցախի Հանրապետության կառավարությանն աջակցելը տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, կառավարման ավտոմատացմանն ուղղված էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի նախագծման, պատրաստման (ծրագրավորում), ներդնելու և համապատասխան մասնագետների պատրաստման, վերապատրաստման հարցում.

11) տեղեկատվական ոլորտի կազմակերպություններին համապատասխան ենթակառուցվածքներով հագեցված աշխատանքային և գրասենյակային տարածքներ, կոնֆերանս դահլիճներ տրամադրելը՝ համապատասխան աշխատանքների, խորհրդակցությունների, սեմինարների և ժողովների անցկացման համար, համապատասխան լաբորատոր պայմաններով ապահովելը՝ հետազոտական աշխատանքների կատարման համար.

12) ներդրումային ծրագրերի նախագծմանն, մշակմանն և ընթացիկ սպասարկմանն աջակցություն ցուցաբերելը՝ տեղական և միջազգային ներդրումների համար.

13) արտաքին տնտեսական գործունեությունը խթանելը, օտարերկրյա ներդրողների և հնարավոր գործընկերների միջև գործարար կապեր ստեղծելը.

14) հիմնադրամին ներկայացվող ծրագրերը փորձաքննելը և հաստատելը, դրանց իրականացման աշխատանքները ֆինանսավորելը, կապալառուներ և խորհրդատուներ (նաև գործակալներ և այլ միջնորդներ) ընտրելը.

15) խորհրդատվական և մեթոդաբանական օգնության և զարգացման հաջողակ մոդելներ մշակելը, և դրանք տնտեսավարող սուբյեկտներին տրամադրելը.

16) նպատակային դրամաշնորհներ տրամադրելը՝ սեփական և ներգրավված (հովանավորչական, մարդասիրական և այլ) միջոցներով՝ առանձին ծրագրերի գծով.

17) բիզնեսի զարգացման համար ոլորտի կազմակերպություններին աջակցելը՝ հետևյալ ուղղություններով.

ա. ֆինանսական միջոցների ներգրավում,

բ. գործարար կապերի ձևավորում,

գ. բիզնես խորհրդատվություն.

18) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ներդրումներին և նոր կազմակերպություններին ստեղծումը խթանելը.

19) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հետազոտություններ և մշակումներ խթանելը.

20) Արցախի Հանրապետության տնտեսությունում նոր և առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում խթանելը.

21) գիտության, կրթության, առողջապահության, արդյունաբերության, մշակութային, գյուղատնտեսության, ժամանակակից տեխնոլոգիաների և այլ ոլորտների զարգացման համար անհրաժեշտ ռազմավարություն պլանավորելը.

22) կարևոր նշանակություն ունեցող բարեգործական և ձեռնարկատիրական ծրագրեր իրականացնելը՝ սեփական և ներգրավված (հովանավորչական, մարդասիրական և այլ) միջոցներով.

23) տնտեսության հեռանկարային զարգացման ռազմավարություն մշակելը և իրականացնելը.

24) գիտական տեխնոլոգիական հետազոտությունների իրականացմանն աջակցությունն ցուցաբերելը՝ ֆինանսավորելով կարևորագույն գիտական և գիտատեխնոլոգիական ծրագրերը.

25) գիտության և այլ ոլորտներում նորարարական գաղափարների, գիտության ոլորտում նորարարական առաջընթացն ապահովող ծրագրերին օժանդակելը, իրականացնելը.

26) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն իրականացնելը:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

10. Հիմնադրամը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

11. Հիմնադրամն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, Արցախի Հանրապետության և այլ պետությունների բանկերում հաշվարկային ու այլ հաշիվներ, իր անվանամբ ու խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ:

12. Հիմնադրամն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

13. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

14. Հիմնադրամն իրավունք ունի՝

- 1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.
- 2) հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.
- 3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.
- 4) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.
- 5) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.
- 6) Արցախի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին.

7) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

15. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ հիմնադրամի պարտավորությունների համար:

16. Հիմնադրամը կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

- 1) մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում.
- 2) տվյալների փոխանցման ծառայությունների մատուցում.
- 3) հրատարակչական գործ.
- 4) տվյալների բազայի ստեղծում.
- 5) շուկայի իրավիճակի և հասարակական կարծիքի բացահայտման հետազոտություններ.
- 6) նպատակային դասընթացների կազմակերպում.
- 7) խորհրդատվություններ՝ առևտրային գործունեության և կառավարման հարցերով.

8) գովազդ.

9) տեխնիկական փորձարկումներ և վերլուծություններ:

17. Հիմնադրամը կարող է՝

1) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տնօրինել, տիրապետել և օգտագործել դրանք, ինչպես նաև դրանց արդյունքում առաջացած եկամուտը.

2) ինքնուրույն ձևավորել իր ֆինանսական միջոցները, ինչպես նաև ստանալ վարկ, տրամադրել և ստանալ այլ փոխառություններ, դրամաշնորհներ և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ.

3) առանձին ծրագրերի իրականացման համար վարկային ռեսուրսներ ներգրավելու նպատակով թողարկել արժեթղթեր.

4) իրականացնել անվանական ծրագրեր՝ խոշոր միանվագ մուծումների դեպքում:

18. Հիմնադրամի կողմից տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների ստեղծման դեպքում հիմնադրամի՝ որպես հիմնադրի, անունից հանդես է գալիս հիմնադրամի կառավարիչը (գլխավոր տնօրենը):

4. ՀԻՄՆԱՂՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

19. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:

20. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռքբերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան:

21. Հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցների, գոյացման աղբյուրներն են՝

1) Արցախի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ֆինանսական և նյութական ներդրումները.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններն ու նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

4) դրամաշնորհները.

5) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

6) հանգանակությունները.

7) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

22. Հիմնադրամի կազմավորման և միջոցների հավաքագրման գործին մեծ նպաստ բերած անձանց հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից կարող են շնորհվել պատվավոր կոչումներ:

23. Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի հրապարակել հաշվետվություն իր սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման մասին:

5. ՀԻՄՆԱՂՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

24. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով: Հիմնադրամի մարմիններն են՝

1) հոգաբարձուների խորհուրդը.

2) կառավարիչը՝ գլխավոր տնօրենը.

3) անհրաժեշտության դեպքում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կարող է ստեղծվել կոլեգիալ գործադիր մարմին:

25. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհուրդը կազմված է 5 անդամներից:

26. Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

27. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամի համար կարող է սահմանվել դրամական փոխհատուցում այն ծախսերի համար, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է Խորհուրդը:

28. Խորհրդի անդամների լիազորությունների դադարման և նոր անդամի ընտրության կարգը սահմանվում է օրենքով: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

29. Գլխավոր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, վերակազմակերպման, լուծարման ու կանոնադրության մեջ փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

30. Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա կարող են նիստ հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք: Նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

31. Խորհրդի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել հիմնադրամի գլխավոր տնօրենը:

32. Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային և այլ շահերին վերաբերող հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

33. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) հիմնադրամի ռազմավարական ծրագրերի հաստատումը.

2) հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հիմնադրամի բյուջեի, դրանում կատարվող փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների հաստատումը.

4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

6) Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

7) գլխավոր տնօրենի ընտրության ու նրա լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

8) հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումների ընդունումը.

9) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների ստեղծման և նրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

10) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

11) գլխավոր տնօրենի հաշվետվությունների լսումը, ոչ պակաս, քան տարին մեկ անգամ.

12) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

13) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը՝ գլխավոր տնօրենի ներկայացմամբ.

14) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

15) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.

16) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

17) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

18) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

34. Խորհրդի իրավասությանը վերաբերող հարցերը կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

35. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալ հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

36. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

3) կազմակերպում է նիստի արձանագրության վարումը.

4) Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

37. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում, Խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

38. Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է (կառավարիչը) գլխավոր տնօրենը:

39. Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, ինչպես նաև այն լիազորությունները, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված չեն Խորհրդին: Գլխավոր տնօրենը կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը: Գլխավոր տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է Խորհուրդը: Գլխավոր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրի անունից պայմանագիրն ստորագրում է Խորհրդի նախագահը:

40. Հիմնադրամի գլխավոր տնօրենը՝

1) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.

2) ներկայացնում է հիմնադրամն Արցախի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

3) գործում է առանց լիազորագրի.

4) տալիս է լիազորագրեր.

5) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

6) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

7) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքն ու հաստիքացուցակը.

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) սահմանված կարգով աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

10) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

11) ձևավորում է հիմնադրամի գլխավոր տնօրենին առընթեր հանձնաժողովներ, հանձնախմբեր և խորհուրդներ, այդ թվում՝ վճարովի հիմունքներով:

41. Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել գլխավոր տնօրենի հետ կնքած պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

42. Խորհրդի նիստերն արձանագրվում են օրենքին համապատասխան:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻՂԻՏԸ

43. Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը կատարվում է անկախ աուդիտորների կողմից՝ առնվազն տարին մեկ անգամ:

44. Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով կարող է անցկացվել արտահերթ աուդիտորական ստուգում:

45. Աուդիտորներն ընտրվում են մրցութային կարգով և հաստատվում Խորհրդի կողմից: Մրցույթը կազմակերպում է գլխավոր տնօրենը:

7. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

46. Հիմնադրամն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

47. Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը կազմակերպվում, վարվում և հաշվապահական հաշվետվությունը կազմվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

48. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

49. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Արցախի Հանրապետության պետական բյուջե:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՍՇՆԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ջ Մ

**«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

Ռուղիկ Հյուսնունց	Արցախի Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդական-հատուկ հանձնարարություններով դեսպան
Դավիթ Բաբայան	Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար
Սմբատ Պետրոսյան	Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Նորայր Ավանեսյան	Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ
Նորայր Հովսեփյան	Արցախի հանրային հեռուստատեսության լրատվական բաժնի պետ-գլխավոր խմբագիր

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ
«ԱՐՑԱՒԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

(Գազմված է _____ թվականին և բաղկացած է ___ թերթից)

ք. Ստեփանակերտ _____ 2021թ.

«Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամը՝ ի դեմս հիմնադրամի գլխավոր տնօրեն՝ Ժամանակավոր պաշտոնակատար Նարեկ Աշոտի Պողոսյանի, մի կողմից, և «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը՝ ի դեմս հիմնադրամի գլխավոր տնօրեն Լևոն Ղուլյանի, մյուս կողմից, կնքեցին սույն միացման պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

«Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամ ((այսուհետ նաև՝ Միացող հիմնադրամ) գրանցված է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից _____ թ., գրանցման համարը՝ _____, հարկ վճարողի հաշվառման համար՝ _____, գտնվելու վայրի հասցե՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Արզանյանի փակուղի, տուն 14),

«Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամ ((այսուհետ նաև՝ Ընդլայնվող հիմնադրամ) գրանցված Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից _____ թ., գրանցման համարը՝ _____, հարկ վճարողի հաշվառման համար՝ _____, գտնվելու վայրի հասցե՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Կամո 4):

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագիրը կնքվում է հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության _____ թվականի N____-Ն որոշումը առ այն, որ «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամը միացման ձևով վերակազմակերպվում է՝ միանալով «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամին:

**3. ՄԻԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ,
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

1. Միացման շրջանակներում դադարում է Միացող հիմնադրամի գործունեությունը, իսկ դրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են միացման հետևանքով ընդլայնվող հիմնադրամին:

2. Միացող հիմնադրամի գույքին և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին, ներառյալ վիճարկվող պարտավորությունների մասին կազմվում է փոխանցման ակտ, որը ներկայացվում է Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը:

3. Միացող հիմնադրամի իրավունքները և պարտականությունները միացման արդյունքում ամբողջությամբ անցնում են միացման հետևանքով Ընդլայնվող հիմնադրամին՝ փոխանցման ակտի համաձայն:

4. Հիմնադրամները Պայմանագրի կնքումից հետո _____ ժամկետում պարտավորվում են ձեռնամուխ լինել Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմնադրամների միացման գործընթացի կազմակերպմանը և Արցախի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

գործակալությունում Հիմնադրամների միացման վերաբերյալ դիմումների ներկայացմանը, մասնավորապես՝

1) Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացնում հիմնադրամի՝ Ընդլայնվող հիմնադրամին միացման ձևով վերակազմակերպման և այլ անհրաժեշտ հարցերի մասին (միացման պայմանագրի, փոխանցման ակտի հաստատում)։

2) Ընդլայնվող հիմնադրամի հիմնադիրը որոշում է կայացնում հիմնադրամին Միացող հիմնադրամի միացման արդյունքում վերակազմակերպման և այլ անհրաժեշտ հարցերի մասին։

3) Արցախի Հանրապետության կառավարության կողմից վերակազմակերպման մասին որոշում ընդունելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հիմնադրամների գործադիր մարմինների ղեկավարները սահմանված կարգով գրավոր ծանուցում են իրենց բոլոր պարտատերերին (առկայության դեպքում) վերակազմակերպման վերաբերյալ: Ծանուցումը պետք է պարունակի տեղեկություններ՝ վերակազմակերպման մասին որոշում ընդունելու տարվա, ամսվա, ամսաթվի, վերակազմակերպման ձևի և մասնակիցների, ինչպես նաև պարտավորությունների իրավահաջորդության մասին։

4) Միացմամբ պայմանավորված պետական գրանցումների կատարման նպատակով միացման պայմանագիրը, փոխանցման ակտը և օրենքով սահմանված մյուս անհրաժեշտ փաստաթղթերը հիմնադրամները ներկայացնում են Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

5. «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի գործունեության դադարման պետական գրանցման պահից «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը հանդիսանում է «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի իրավահաջորդը և Ընդլայնվող հիմնադրամին են անցնում «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան։

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների ամբողջական կատարումը:

2. Պայմանագիրը կարող է լուծվել կամ փոփոխվել կողմերի համաձայնությամբ մինչև Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից միացմամբ պայմանավորված պետական գրանցումների կատարումը:

5. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը ենթական են լուծման դատական կարգով:

2. Սույն պայմանագիրը բաղկացած է _____թերթից և կազմված է չորս հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

«Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի
գլխավոր տնօրեն՝ Ժամանակավոր պաշտոնակատար

_____ Նարեկ Պողոսյան

«Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի
Գլխավոր տնօրեն՝

_____ Լևոն Ղուլյան

**«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԻ,
ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ
ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՑԱԼ ՎԻՃԱՐԿՎՈՂ)
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԱՐՑԱԽԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏ**

1. «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը (գրանցված Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից _____թ., գրանցման համարը _____ հարկ վճարողի հաշվառման համար _____, գտնվելու վայրի հասցե՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Կամո 4) հանդիսանում է «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի (գրանցված Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից _____թ., գրանցման համարը _____, հարկ վճարողի հաշվառման համար _____, գտնվելու վայրի հասցե՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Արզանյանի փակուղի, տուն 14) իրավահաջորդը, որին փոխանցվում են «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամին պատկանող և սույն փոխանցման ակտում նշված ակտիվները և պասիվները, այլ իրավունքներն ու պարտականությունները:

2. «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամին են փոխանցվում «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի հաշվեկշռում ընդգրկված դրամական միջոցները (հաշվեկշռից հաշվեկշիռ սկզբունքով)՝ հետևյալ հիմնական ցուցանիշները (12.01.2021թ. դրությամբ)՝

ԱԿՏԻՎ	ՀՀ դրամ	ՊԱՍԻՎ	ՀՀ դրամ
1. Ոչ ընթացիկ ակտիվներ		3. Սեփական կապիտալ	
Հիմնական միջոցներ	9 445 682,1		
Ոչ նյութական ակտիվներ	3 062 195,9		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	12 507 878,0	Ընդամենը սեփական կապիտալ	
2. Ընթացիկ ակտիվներ		4. Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Նյութեր	1 193 150,0	Ոչ ընթացիկ պահուստներ, այդ թվում՝ աշխատավարձերի վճարում, _____	
Արագամաշ առարկաներ		Ակտիվներին վերաբերող շնորհներ	12 507 878,0
		Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	12 507 878,0
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր		5. Ընթացիկ պարտավորություններ	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ Արցախբանկ ՓԲԸ, հաշվի համար 22311021380600	1 000,0	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր	
		Եկամուտներին վերաբերող շնորհներ	1 194 150,0
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	1 194 150,0	Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	1 194 150,0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	13 702 028,0	ՀԱՇՎԵԿՇԻՌ	13 702 028,0

3. «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամին են փոխանցվում «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի կողմից պահպանման ենթակա փաստաթղթերը:

4. «Ռազմավարական պլանավորման կենտրոն» հիմնադրամը չունի այլ իրավունքներ, ակտիվներ և պասիվներ:

«Ռեզումեարական պլանավորման կենտրոն» հիմնադրամի
գլխավոր տնօրեն՝ ժամանակավոր պաշտոնակատար

_____ Նարեկ Պողոսյան

«Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի
Գլխավոր տնօրեն՝

_____ Լևոն Ղուլյան

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 փետրվարի 2021թ.

N 61-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 451 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի ««Զարգացման արցախյան գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Արցախի ներդրումային հիմնադրամի վերակազմակերպելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 451 որոշմամբ հաստատված՝

1) N 1 հավելվածի 26-րդ կետում «6» թիվը փոխարինել «5» թվով.

2) N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի փետրվարի 5-ի N 61-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության
2007թ. հոկտեմբերի 29-ի թիվ 451 որոշման

Կ Ա Ջ Մ

ԱՐՑԱՒԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1. Արցախի Հանրապետության Նախագահ (Խորհրդի նախագահ)
2. Արցախի Հանրապետության պետական նախարար, ֆինանսների նախարար
3. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարար
4. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
5. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի առաջին տեղակալ»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2021թ.

N 65-Ն

ք. Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 30-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Մահմանել, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած բնակավայրերում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ դիմում ներկայացրած ֆիզիկական և իրավաբանական անձինք ազատվում են «Պետական տուրքի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 31-րդ կետի 1-14-րդ ենթակետերով նախատեսված պետական տուրքերի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի նոյեմբերի 10-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի հունվարի 29-ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
15-Ի N 61-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՋԵՆԵՐԱԼ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 29-ի գրությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի Հանրապետության նախագահների և Հայաստանի Հանրապետության վարչապետի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագիրն իր հետևանքներով Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 15-ի «ՋԵՆԵՐԱԼ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՉԱՐՀԷԿ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 61-Ա որոշումը և այդ որոշումը «ՋԵՆԵՐԱԼ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «ՉԱՐՀԷԿ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0007 լիցենզիան:

2. «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 2745/06/01 գրությամբ տրված E1900037 բանկային երաշխիքի համաձայն Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի առջև ստանձնած 4 812 500 (չորս միլիոն ութ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 30-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հունվարի 29
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
2021 թվականի հունվարի 29-ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2-Ա
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2021 թվականի հունվարի 13-ի գրությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Ադրբեյջանի Հանրապետության նախագահների և Հայաստանի Հանրապետության վարչապետի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագիրն իր հետևանքներով՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի մարտի 27-ի ««Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը «Քարվաճառ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 4-Ա որոշումը և այդ որոշմամբ «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրված «Քարվաճառ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0002 լիցենզիան:

2. «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2019 թվականի հունվարի 14-ի N 67/06/01 գրությամբ տրված E1900002B1901 բանկային երաշխիքի համաձայն Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի առջև ստանձնած 12 402 500 (տասներկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով երաշխիքային պարտավորությունից:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 30-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հունվարի 29
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի հունվարի 29-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՆՄԲԵՐԻ
20-ԻՆ 58-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ո Յ Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2021 թվականի հունվարի 13-ի գրությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Ադրբեյջանի Հանրապետության նախագահների և Հայաստանի Հանրապետության վարչապետի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագիրն իր հետևանքներով՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 20-ի «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 58-Ա որոշումը և այդ որոշմամբ «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրված «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N 0009 լիցենզիան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 30-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հունվարի 29
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի հունվարի 29-ի

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
29-Ի N 22-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 4-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Զանգեզուր ԷՅՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի 13-ի գրությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Ադրբեյջանի Հանրապետության նախագահների և Հայաստանի Հանրապետության վարչապետի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագիրն իր հետևանքներով՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 29-ի ««Զանգեզուր ԷՅՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Զանգեզուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 22-Ա որոշումը և այդ որոշմամբ «Զանգեզուր ԷՅՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Զանգեզուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0006 լիցենզիան:

2. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2020 թվականի ապրիլի 7-ի թիվ 01-480 գրությամբ տրված թիվ 2026417125 բանկային երաշխիքի համաձայն Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի առջև ստանձնած 9 500 000 (ինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 30-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հունվարի 29
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի հունվարի 29-ի

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 61-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 5-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 41-ը հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՄՌԱՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հունվարի 18-ի գրությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի Հանրապետության նախագահների և Հայաստանի Հանրապետության վարչապետի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագիրն իր հետևանքներով՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «ՄՌԱՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Մռավ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 61-Ա որոշումը և այդ որոշմամբ «ՄՌԱՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Մռավ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0013 լիցենզիան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 30-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հունվարի 29
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

2021 թվականի հունվարի 29-ի

**ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
17-Ի N 58Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 6-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2021 թվականի հունվարի 22-ի գրությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի Հանրապետության նախագահների և Հայաստանի Հանրապետության վարչապետի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագիրն իր հետևանքներով Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 17-ի «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը «Մատաղիս-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 58Ա որոշումը և այդ որոշմամբ «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրված «Մատաղիս-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N 0002 լիցենզիան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 30-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հունվարի 29
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

2021 թվականի հունվարի 29-ի

**ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
17-Ի N 59Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 7-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2021 թվականի հունվարի 22-ի գրությունը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի Հանրապետության նախագահների և Հայաստանի Հանրապետության վարչապետի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագիրն իր հետևանքներով Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 17-ի «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը «Մատաղիս-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 59Ա որոշումը և այդ որոշմամբ «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրված «Մատաղիս-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N 0003 լիցենզիան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 30-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հունվարի 29
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի հունվարի 29-ի

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի
N 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 8-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի Հանրապետության նախագահների և Հայաստանի Հանրապետության վարչապետի միջև 2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված համաձայնագիրն իր հետևանքներով՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 5-ի «Փէյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Արցախի Հանրապետության Հաղորդի և Մարտունու շրջանների տարածքում ռադիոհաղորդումների էթերային հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզիա տրամադրելու մասին» N 14-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում «Հաղորդի և Մարտունու շրջանների» բառերը փոխարինել «Մարտունու շրջանի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 30-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի հունվարի 29
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի փետրվարի 12-ի

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ
ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ
ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 14-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածը և 8-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2021 թվականի անվանական կազմը և կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թվականի փետրվարի 12
ք. Ստեփանակերտ

Հավելված
Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի
2021 թվականի փետրվարի 12-ի N 14-Ն որոշման

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ**

(հազ. դրամ)

Հ/Հ		Իրացման շրջանառու- թյուն (առանց ԱԱՀ) 2021թ.	Տեսակա- րար կշիռը	Յուրաքանչյուր ընկերության կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույքաչափը	Որից՝ ըստ եռամսյակների			
					I	II	III	IV
	ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)	10,430,100.0	0.548820	111,774.8	27,943.8	27,943.8	27,943.8	27,943.4
1	«ԱՐՑԱՆԷՆԵՐԳՈ» ՓԲԸ	7,020,000.0	0.369385	75,230.3	18,807.6	18,807.6	18,807.6	18,807.5
2	«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԲԸ	2,185,000.0	0.114972	23,415.7	5,853.9	5,853.9	5,853.9	5,854.0
3	«ԱԼՖԱՄԱԳ» ՓԲԸ	180,000.0	0.009471	1,929.0	482.3	482.3	482.3	482.1
4	«ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	1,045,100.0	0.054992	11,199.8	2,800.0	2,800.0	2,800.0	2,799.8
	ԳԱԶԱՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)	4,881,482.5	0.256858	52,312.7	13,078.2	13,078.2	13,078.2	13,078.1
5	«ԱՐՑԱՆԳԱԶ» ՓԲԸ	4,881,482.514	0.256858	52,312.7	13,078.2	13,078.2	13,078.2	13,078.1
	ՋԵՐՄԱՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)	247,121.0	0.013003	2,648.3	662.1	662.1	662.1	662.0

6	«ՋԵՐՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	247,121.0	0.013003	2,648.3	662.1	662.1	662.1	662.0
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)		348,750.0	0.018351	3,737.4	934.3	934.3	934.3	934.5
7	«ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	8,750.0	0.000460	93.8	23.4	23.4	23.4	23.6
8	«ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ	340,000.0	0.017890	3,643.6	910.9	910.9	910.9	910.9
ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ (Ընդամենը)		3,000,000.0	0.157857	32,149.7	8,037.4	8,037.4	8,037.4	8,037.5
9	«ՂԱՐԱԲԱՂ ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ	3,000,000.0	0.157857	32,149.7	8,037.4	8,037.4	8,037.4	8,037.5
ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊ (Ընդամենը)		17,130.0	0.000901	183.6	45.9	45.9	45.9	45.9
10	«ԱՐՑԱԽՓՈՍՍ» ՓԲԸ	17,130.0	0.000901	183.6	45.9	45.9	45.9	45.9
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՈՐՈՇՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ (Ընդամենը)		80,000.0	0.004210	857.3	214.3	214.3	214.3	214.4
11	«ՏԵԽՆՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	80,000.0	0.004210	857.3	214.3	214.3	214.3	214.4
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		19,004,583.5	1.0	203,663.8	50,916.0	50,916.0	50,916.0	50,915.8

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

2021 թվականի փետրվարի 9-ի

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 65-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 24-ի «Տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 1 «Համայնքի գիրք» հաստատելու մասին» N91-Ն որոշումը.

2) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 24-ի «Հաշվառման Ձև թիվ 2 «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը հաստատելու մասին» N92-Ն որոշումը.

3) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 24-ի «Տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 3 «Այբբենական գիրք» հաստատելու մասին» N93-Ն որոշումը.

4) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 24-ի «Տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 1 «Համայնքի գիրքը», հաշվառման Ձև թիվ 2 «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» և տնտեսությունների հաշվառման Ձև թիվ 3 «Այբբենական գիրքը» վարելու ցուցումները հաստատելու մասին» N94-Ն որոշումը:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թվականի փետրվարի 9
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

2021 թվականի փետրվարի 9-ի

**ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎ N 1 «ՀԱՄԱՅՆՔԻ
ԳԻՐՔԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 66-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով՝ Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Տնտեսությունների հաշվառման Ձև N 1 «Համայնքի գիրքը»»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թվականի փետրվարի 9
ք. Ստեփանակերտ

Տնտեսությունների հաշվառման Ձև N 1

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Գ Ի Ր Ք N _____

համայնքի անվանումը

առ 2021թ. 2022թ. 2023թ. 2024թ. 2025թ.

Գրքում գրանցված են հետևյալ բնակավայրերի տնային տնտեսությունները

_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը
_____	ից	_____	մինչև	_____	ընդ	_____	էջը

Համայնքի գրքում (Ձև N 1) գրանցվում են տվյալ համայնքի տարածքում մշտապես բնակվող տնային տնտեսությունները

Անձնական հաշիվ N

Տնային տնտեսության առաջինը գրանցված (զլխավոր) անդամի ազգանունը, անունը, հայրանունը _____

Տնտեսության տեսակը առ 01.01.2021թ. _____ առ 01.01.2022թ. _____ առ 01.01.2023թ. _____ առ 01.01.2024թ. _____ առ 01.01.2025թ. _____

(հողակադաստրային գրքով N _____)

1. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1	Ազգանուն, անուն, հայրանուն (գրել լրիվ)								
2	Առնչությունը տնային տնտեսության առաջինը գրանցված (զլխավոր) անդամի հետ								
3	Սեռը (արական, իգական)								
4	Ծննդյան օրը, ամիսը, տարին (համայնքի գրքի հիմնումից հետո ծնվածների համար ցույց տալ ծննդյան ակտի գրանցման համարը և օրը, ամիսը, տարին)								
5	Ազգությունը								
6	Կրթությունը (բարձրագույն, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական, միջնակարգ հանրակրթական, հիմնական հանրակրթական, տարրական հանրակրթական, չունի տարրական, գրաճանաչ չէ)								
7	Սովորողների համար	առ 01.01.20 ...թ.							
8	նշել ուսումնական	առ 01.01.20 ...թ.							
9	հաստատության անունը	առ 01.01.20 ...թ.							
10	(տեսակը), գտնվելու վայրը և	առ 01.01.20 ...թ.							
11	որ դասարանում կամ կուրսում է սովորում	առ 01.01.20 ...թ.							
12	Աշխատանքի վայրը և զբաղմունքը								
13	Հետագա փոփոխությունները	առ 01.01.20 ...թ.							
14	աշխատանքում՝ ստուգման	առ 01.01. 20 ...թ.							

15	պահին	առ 01.01.20 ...թ.							
16		առ 01.01.20 ...թ.							
17	Նշումներ տնային տնտեսության անդամների ժամանակավոր բացակայության մասին (նշել մեկնելու ամիսը, տարին, պատճառը և տնտեսություն վերադառնալու ամիսը, տարին)	Մեկնել է							
18		Վերադարձել է							
19		Մեկնել է							
20		Վերադարձել է							
21		Մեկնել է							
22		Վերադարձել է							
23		Մեկնել է							
24		Վերադարձել է							
25	Մեկնել է								
26	Վերադարձել է								
27	Նշումներ տնտեսության կազմից վերջնականապես հեռացած տնտեսության անդամի մասին (նշել ամիսը, տարին և հեռանալու պատճառը): Մահացածների համար նշել մահվան գրանցման ակտի համարը և օրը, ամիսը, տարին								
28	Նշումներ տվյալ համայնքի տարածք նոր եկած անձանց մասին (նշել գալու ամիսը, տարին և որտեղից է եկել)								
29	Նշումներ ծերության և հաշմանդամության կենսաթոշակի մասին (նշել խումբը) և ընտանեկան նպաստ ստացող անձանց մասին, կենսաթոշակի տեսակի կամ հաշմանդամության խմբի հետագա փոփոխություններ								

Տնտեսության հասցեն, հեռախոսահամարը` _____

2. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՓՎԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ (առ 01.01)

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները և խմբերը		2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
1.	ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ (զլուխ)					
1.1.	որից` կովեր					
1.2.	ցուլեր					
1.3.	երինջներ` 1-ից մինչև 2 տարեկան					

1.4.	Երինջներ՝ 2 տարեկանից բարձր					
1.5.	գումեշներ (զլուխ)					
2.	ԽՈԶԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ (զլուխ)					
2.1.	որից՝ մայր խոզեր հիմնական հոտի					
3.	ՈՉԽԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՂԵՐԻ, ԸՆԴԱՄԵՆԸ (զլուխ)					
3.1.	որից՝ մաքիներ					
4.	ԱՅԾԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ (զլուխ)					
4.1.	որից՝ մայր այծեր					
5.	ՁԻԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ (զլուխ)					
5.1.	որից՝ զամբիկներ 3 տարեկան և ավելի					
6.	ՃԱԳԱՐՆԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ (զլուխ)					
6.1.	որից՝ մայր ճագարներ					
7.	ԹՈՉՈՒՆՆԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ (զլուխ)					
7.1.	որից՝ ածան հավեր					
8.	ՄՈՐԹԱՏՈՒ ԳԱԶԱՆՆԵՐ (զլուխ)					
8.1.	որից՝ մայրեր					
9.	ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐ (հատ)					
10.	ԱՎԱՆԱԿՆԵՐ (զլուխ)					
11.	ՋՈՐԻՆԵՐ (զլուխ)					

3. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ(ՆԵՐ)Ի ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆ

	առ 1-ը հունվարի				
	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
Բնակելի տան ընդհանուր մակերեսը, քառ.մ					
Բնակարանների ընդհանուր մակերեսը, քառ.մ					

Ստորագրություններ առ 01.01.2021թ. առ 01.01.2022թ.

Տնտեսության անդամի _____

Գյուղապետի աշխատակազմի քարտուղարի կամ գրանցումներ և ստուգումներ կատարող անձի _____

4. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՀՈՂ

	Տվյալները լրացվում են կադաստրային (հողակադաստրային) գրքից (հարյուրերորդական հեկտարի ճշտությամբ)					
	առ 01.07 2020թ.	առ 01.07				
		2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
Ա. Ընդամենը հողեր (ներառյալ տնամերձը)						
որից՝ վարելահող						
բազմամյա տնկարկ						
արոտավայր						
խոտհարք						
տնամերձ հող						
	առ 01.06	առ 01.06				
		2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
Բ. Ցանքային տարածությունը (ընտանիքի չափահաս անդամից հարցման կարգով) (հարյուրերորդական հեկտարի ճշտությամբ)						
որից՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր						
կարտոֆիլ						

բանջարեղեն (բաց և փակ գրունտի)						
Գ. Պտղի և հատապտղի տնկարկիների տարածությունները, ընդամենը						
Դ. Խաղողի տնկարկիների տարածությունները, ընդամենը						
Ե. Թթի տնկարկիների տարածությունները, ընդամենը						
Զ. Այլ տարածությունները, ընդամենը						

5. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՑՈՒՂՏԵԽՆԻԿԱ

	առ 1-ր հունվարի									
	2021թ.		2022թ.		2023թ.		2024թ.		2025թ.	
	հատ	որից՝ սարքին	հատ	որից՝ սարքին	հատ	որից՝ սարքին	հատ	որից՝ սարքին	հատ	որից՝ սարքին
Տրակտորներ										
Բեռնատար մեքենաներ										
Հացահատիկային կոմբայններ										
Կարտոֆիլահավաք կոմբայններ										
Տրակտորային կցասայլեր										
Տրակտորային խոտհնձիչներ										
Կերահավաք կոմբայններ										
Հատիկագտիչ մեքենաներ										
Տրակտորային շարքացաններ										
Տրակտորային գութաններ										
Կուլտիվատորներ										
Մամլիչներ										
Այլ գյուղտեխնիկա										

Լրացուցիչ տեղեկություններ

առ 01.01.2023թ.

առ 01.01.2024թ.

առ 01.01.2025թ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2021թվականի փետրվարի 9-ի

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎ N 2 «ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 67-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով՝ Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Հաշվառման Ձև N 2 «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը»՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թվականի փետրվարի 9
ք. Ստեփանակերտ

Հաշվառման Ձև N 2

Ց ՈՒ Ց Ա Կ

**20__ թ. _____ ՀԱՄԱՅՆՔԻ
 ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ**

Հերթական համարը	Ազգանուն,անուն, հայրանուն (լրիվ)	Սեռը (արական, իգական)	Ծննդյան օրը, ամիսը, տարին	Կրթությունը (բարձրագույն, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական, միջնակարգ հանրակրթական, հիմնական հանրակրթական, տարրական հանրակրթական, չունի տարրական, գրաճանաչ չէ)	Սովորողների համարն ընդ ուսումնական հաստատության անունը (տեսակը), գտնվելու վայրը և որ դասարանում կամ կուրսում է սովորում	Մշտական բնակավայրը
Ա.	1	2	3	4	5	6

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2021 թվականի փետրվարի 9-ի

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎ N 3 «ԱՅԲԲԵՆԱԿԱՆ
ԳԻՐՔԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 68-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով՝ Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Տնտեսությունների հաշվառման Ձև N 3 «Այբբենական գիրքը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թվականի փետրվարի 9
ք. Ստեփանակերտ

Տնտեսությունների հաշվառման Ձև N 3

_____ համայնքի տնային տնտեսությունների

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԳԻՐՔ

2021թ. 2022թ. 2023թ. 2024թ. 2025թ. ՀԱՄԱՐ

Սույն գրքում գրառվում են համայնքի գրքում (Ձև N 1)
գրանցված բոլոր տնային տնտեսությունները՝ այբբենական կարգով

Տնային տնտեսությունների բաշխումն ըստ քանակի և տնտեսության տեսակի

Տնտեսության տեսակը	Տնային տնտեսությունների քանակն առ 1-ը հունվարի				
	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
Գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվողներ					
Այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվողներ					
Անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղվողներ					
Թռչակառու					

Հերթական համարը	Տնտեսության առաջինը գրանցված անդամի ազգանունը, անունը, հայրանունը	Տնային տնտեսության անձնական հաշվի համարը	Գրանցված է տնային տնտեսությունների հաշվառման		Տնային տնտեսության տեսակը	Նշում տնային տնտեսության տեսակի և տնտեսության առաջինը գրանցված անդամի փոխվելու մասին	Տնային տնտեսության անձնական հաշիվը փակելու ամիսը, տարին և պատճառը
			գիրք N	էջ N			

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2021 թվականի փետրվարի 9-ի

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎ N1 «ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՐՔԸ»,
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎ N 2 «ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ» ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՁԵՎ N 3 «ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԳԻՐՔԸ» ՎԱՐԵԼՈՒ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 69-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով՝ Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Տնտեսությունների հաշվառման Ձև N 1 «Համայնքի գիրքը», հաշվառման Ձև N 2 «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» և տնտեսությունների հաշվառման Ձև N 3 «Այբբենական գիրքը» վարելու ցուցումները»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թվականի փետրվարի 9
ք. Ստեփանակերտ

Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎ N 1՝
«ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՐՔԸ», ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎ N 2՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ» ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎ N 3՝ «ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԳԻՐՔԸ» ՎԱՐԵԼՈՒ

1. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՎԱՐԵԼՈՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համայնքներում վիճակագրական նպատակով տնային տնտեսությունների և նրանց անդամների հաշվառման փաստաթղթեր են հանդիսանում Արցախի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատված, քաղաքապետարանների կամ գյուղապետարանների սկզբնական հաշվառման հետևյալ ձևերը՝

- 1) «Համայնքի գիրք» (տնտեսությունների հաշվառման Ձև N 1).
- 2) «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակ» (հաշվառման Ձև N 2).
- 3) «Տնային տնտեսությունների «Այբբենական գիրք» (տնտեսությունների հաշվառման Ձև N 3):

2. Սույն հաշվառումը վիճակագրական նպատակով է, սակայն հաշվառման ձևերի վարույթն, ըստ էության, վարչական ռեգիստրի իմաստ ունի: Տնտեսությունների հաշվառումը N 1, 2 և 3 ձևերում պետք է վարվի սույն ցուցումներին համապատասխան: Ձևերում ջնջումներ և տեքստային գրանցումներով չվերապահված ուղղումներ կատարել չի թույլատրվում: Յուրաքանչյուր ուղղում և ջնջում պետք է վավերացվի քաղաքապետի կամ գյուղապետի կամ նրա աշխատակազմի քարտուղարի ստորագրությամբ:

3. Տնային տնտեսությունների հաշվառումը սահմանված ձևերով իրականացվում է բոլոր համայնքների համար (բացի Մտեփանակերտ համայնքից):

4. Համայնքի տնային տնտեսությունների հաշվառման գրքերի և ցուցակների պահպանման, ժամանակին ու արժանահավատ գրանցումների կատարման աշխատանքներն իրականացվում է քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից՝ քաղաքապետի կամ գյուղապետի անմիջական վերահսկողությամբ:

5. Քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը համարակալում է համայնքի յուրաքանչյուր գրքի էջերը հերթական համարակալմամբ և յուրաքանչյուր գրքի վերջին էջում գրառում է դրանում ընդամենը՝ էջերի քանակը, որը վավերացվում է քաղաքապետի կամ գյուղապետի կողմից՝ ստորագրությամբ և կնիքով:

6. Տնային տնտեսությունների հաշվառման գրքերի և ցուցակի վարման գործընթացում մեթոդաբանական հարցերով, ըստ անհրաժեշտության, քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմին հրահանգավորում է վիճակագրության մարմինը:

7. Համայնքի տնային տնտեսությունների հաշվառման (Ձև N 1) և համայնքի տնային տնտեսությունների «Այբբենական գիրքը» (Ձև N 3) քաղաքապետարաններում կամ գյուղապետարաններում հիմնվում են **2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ վարման հինգ տարի ժամկետով**, հունվարի 1-ից մինչև 25-ը՝ յուրաքանչյուր տնային տնտեսություն համատարած շրջագայության և տնային տնտեսության անդամների հարցման միջոցով: Համայնքի գրքերը հիմնելու միջև ընկած ժամանակահատվածում՝ 2021-2025 թվականների, ընթացքում, ամեն տարի համայնքները պարտավոր են անցկացնել համատարած ստուգում և 2021 թվականի հիմնված գրքերում կատարված գրանցումների ճշգրտում: Գրանցումների ստուգումը և ճշգրտումը կատարվում է հունվարի 1-ի դրությամբ՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածում: «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» (Ձև N 2) կազմվում է յուրաքանչյուր

տարի հունվարի 1-ի դրությամբ: Ցուցակներում գրանցումները կատարվում են համակարգված՝ ամբողջ տարվա ընթացքում: Համայնքի տարածքում հիմնական բնակելի տներից հեռու գտնվող կացարաններում բնակվող տնային տնտեսությունները հաշվառումից դուրս չթողնելու համար, նախքան համայնքի գրքերի հիմնումը, կամ դրանցում գրանցումների համատարած ստուգումն ու ճշգրտումը սկսելը, քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը ճշտում է դրանց առկայությունը համայնքի տարածքում: Ընդ որում, անհրաժեշտ է ուշադրությամբ ստուգել ինչպես բնակելի տների, այնպես էլ ծառայողական բնակատեղերի ու համայնքի տարածքում գտնվող գերատեսչական շենքերում (հանրակացարաններում, մանկատներում, տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններում և այլն) բնակվող տնային տնտեսությունների առկայությունը: Խոշոր համայնքներում, որտեղ քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը չի կարող 25 օրվա ընթացքում անձամբ այցելել բոլոր տնային տնտեսությունները և այդ ժամկետում հիմնել համայնքի գրքերը կամ կատարել գրանցումների համատարած ստուգում ու ճշգրտում, այդ աշխատանքներում նրան օգնելու համար, քաղաքապետի կամ գյուղապետի հանձնարարականով, կարելի է ներգրավել քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմից անհրաժեշտ թվաքանակով աշխատակիցներ: Այդ նպատակով քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, համայնքի սահմանները ճշտելուց հետո, այն կարող է բաժանել առանձին, հստակ սահմանազատված տեղամասերի և դրանք բաշխել աշխատանքներում ներգրավված անձանց միջև, ղեկավարել և վերահսկել նրանց կողմից իրականացվող ամբողջ աշխատանքը:

8. Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը պարբերաբար ստուգում է համայնքների կողմից տնային տնտեսությունների համար վարվող համայնքի հաշվառման գրքերի՝ Ձև N 1 և Ձև N 3, ինչպես նաև ցուցակների՝ Ձև N 2, լրացման ամբողջականությունն ու ճշգրտությունը, ինչպես նաև աջակցում է նրանց վերացնելու հայտնաբերված թերությունները:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐՔՈՒՄ (ՁԵՎ N 1) ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՆՈՒՄԸ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ՓԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. «Համայնքի գրքում» (Ձև N 1) տնային տնտեսությունների անձնական հաշիվները բացվում են 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ գրքերի հիմնման ժամանակ, համայնքի տարածքում մշտապես բնակվող բոլոր տնային տնտեսությունների համար: Յուրաքանչյուր տնային տնտեսության համար, ներառյալ մշտապես բնակվող՝ վարձակալող տնային տնտեսությունները, բացվում է առանձին հաշիվ:

1) Տնային տնտեսություն է համարվում՝

ա. առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում բնակվող անձ՝ ով ինքնուրույն ապահովում է իր կենսական կարիքները և ընդհանուր տնտեսություն վարելու համար տվյալ բնակելի միավորում բնակվող այլ անձանց հետ չի միավորում իր միջոցները:

բ. առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող երկու և ավելի անձինք, ովքեր իրենց կենսական կարիքներն ապահովում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող են կապված լինել ազգակցական կամ ամուսնական կապով, կամ չլինել ազգական, կամ և մեկը, և մյուսը:

10. Համայնքի գրքում անհրաժեշտ գրանցումները կատարվում են յուրաքանչյուր տնային տնտեսություն այցելելու միջոցով՝ ըստ քաղաքում կամ գյուղում բնակելի շինությունների տեղադրության հաջորդականության:

11. Համայնքի տարածքում ժամանակավորապես բնակվող անձանց վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են ոչ թե «Համայնքի գրքում», այլ «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակում» (Ձև N 2):

12. Համայնքի տարածքում լքված տների, մշտապես չբնակվող տնային տնտեսությունների (հովեկների) կողմից տնօրինվող տների, բնակարանների մասին տեղեկությունները քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից պետք է գրանցվեն առանձին ցուցակում:

13. Համայնքի կազմի մեջ մտնող՝ 20-ից ավելի տնային տնտեսություն ունեցող յուրաքանչյուր գյուղի համար բացվում է առանձին համայնքի գիրք: Քաղաքի կամ գյուղի հիմնական բնակելի տներից հետո գտնվող կացարաններում բնակվող տնային տնտեսությունների վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են այն քաղաքի կամ գյուղի համայնքի գրքում, որի վարչական սահմաններում դրանք գտնվում են: Նման կացարանների համար (եթե կան այդպիսիք) համայնքի գրքում հատկացվում են որոշակի քանակությամբ հաշվառման թերթեր: Այն դեպքում, երբ համայնքի տարածքում առկա գյուղի տնային տնտեսությունները 20-ից պակաս են, ապա յուրաքանչյուր բնակավայրի բոլոր տնային տնտեսությունների գրանցումներն ավարտելուց հետո, համայնքի գրքում պետք է թողնել հաշվառման մի քանի ազատ թերթ, որպեսզի հնարավոր լինի հետագա փոփոխությունների դեպքում գրանցել տվյալ գյուղի նոր կազմավորվող տնային տնտեսությունների վերաբերյալ տվյալները:

14. Համայնքի յուրաքանչյուր գրքի անվանաթերթում նշվում է բնակավայրի անվանումը և յուրաքանչյուր բնակավայրի դիմաց նշվում են այն էջերի համարները, որոնցում գետեղված է տվյալ բնակավայրի տնային տնտեսությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Յուրաքանչյուր քաղաքային կամ գյուղական համայնքում՝ համայնքի գրքերը համարակալվում են դրանք լրացնելուց հետո՝ անընդմեջ համարակալումով: Համայնքի գրքերին տրված համարներն օգտագործվում են տնային տնտեսությունների «Այբբենական գիրքը» (Ձև N 3) լրացնելիս:

15. Համայնքի բոլոր քաղաքներում կամ գյուղերում տնային տնտեսությունների համատարած շրջագայությունը և համայնքի գրքերում գրանցումներն ավարտելուց հետո կատարվում է տնային տնտեսությունների համարակալում (անձնական հաշիվ N....), որը պետք է լինի անընդմեջ և միասնական՝ ամբողջ համայնքի համար: Համայնքի յուրաքանչյուր քաղաքի կամ գյուղի համար տնային տնտեսությունների անձնական հաշիվների առանձին համարակալում չի կատարվում:

16. Համայնքի գիրքը հիմնելուց հետո, համայնքի տարածքում նոր տնային տնտեսություն կազմավորվելիս, այդ տնտեսությանը համայնքի սահմաններում տրվում է հերթական հաջորդական համար՝ անկախ նրանից, թե որ քաղաքում կամ գյուղում է կազմավորվել այդ տնային տնտեսությունը և համայնքի գրքում որ համարով են ավարտվել տվյալ քաղաքի կամ գյուղի տնային տնտեսությունների անձնական հաշիվները՝ գիրքը հիմնելու ժամանակ: Նոր տնտեսությունների հերթական համարակալումը հեշտացնելու նպատակով, «Այբբենական գրքի» (Ձև N 3) վերջում՝ մաքուր թերթի վրա գրվում է համայնքի վերջին տնային տնտեսության անձնական հաշիվի համարը:

17. Համայնքի գրքում յուրաքանչյուր տնային տնտեսության անձնական հաշիվի համարը համայնքի գրքի գործունեության ամբողջ ժամանակաշրջանում (2021-2025 թվականներ) մնում է անփոփոխ: Այն չի փոխվում, երբ այս կամ այն տնտեսության բոլոր անդամները մշտական բնակության են տեղափոխվում միևնույն համայնքի մեկ բնակավայրից մյուսը: Նման դեպքերում անհրաժեշտ է փակել տվյալ տնտեսության անձնական հաշիվը այն բնակավայրի համայնքի գրքում, որտեղից տնտեսությունը մեկնել է և անձնական հաշիվ բացել այն բնակավայրի համայնքի գրքում, ուր տեղափոխվել է տնտեսությունը՝ պահպանելով նրա անձնական հաշիվի նախկին համարը: Նախկին բնակավայրում տնտեսության անձնական հաշիվը փակելու մասին նշում է արվում դրա վերևի մասում, ցույց տալով այն փակելու ժամկետը և պատճառը, օրինակ, «Անձնական հաշիվը փակված է (ցույց տալ տարեթիվը, ամիսը և օրը) տնտեսությունը գյուղ Բերդաշեն բնակության տեղափոխվելու կապակցությամբ»: Միաժամանակ անհրաժեշտ է համապատասխան ուղղումներ կատարել նաև տնային տնտեսությունների այբբենական գրքում:

18. Անձնական հաշիվի համարը չի փոխվում նաև այն դեպքում, երբ տնային տնտեսության առաջինը գրանցված (զլխավոր) անդամը փոխարինվում է նույն տնտեսության կազմից մեկ այլ անձով, օրինակ, տնային տնտեսության առաջինը գրանցված անդամի մահվան, կամ այլ պատճառներով: Նման դեպքում տնային տնտեսության անձնական հաշիվը նորից չի արտագրվում, այլ դրանում մտցվում են հետևյալ փոփոխությունները.

1) անձնական հաշիվի վերևի մասում գրվում է տնային տնտեսության առաջինը գրանցված նոր անդամի ազգանունը, անունը և հայրանունը՝ ջնջելով (վրան գիծ քաշելով) մինչև այդ առաջինը գրանցված տնտեսության անդամի ազգանունը.

2) տնային տնտեսության անդամների ցուցակի 2-րդ տողում՝ «Առնչությունը տնային տնտեսության առաջինը գրանցված (գլխավոր) անդամի հետ» գրվում է՝ «Առաջինը գրանցված անդամ», իսկ ընտանիքի մնացած բոլոր անդամների համար՝ գրվում է նրանց ազգակցական կապը տնտեսության առաջինը գրանցված նոր անդամի հետ՝ հայրը, մայրը, կինը, ամուսինը, եղբայրը, քույրը, աղջիկը, տղան և այլն:

19. Մեկ տնային տնտեսությունը երկու կամ ավելի մասի առանձնանալու դեպքում, տվյալ տնտեսության անձնական հաշվով գրանցված էջից հանվում են (վրան գիծ քաշելով) այն անձանց վերաբերվող տվյալները, ովքեր առանձնացել են տվյալ տնտեսության կազմից: Նոր կազմավորված տնտեսության անդամների վերաբերյալ տվյալները լրացնելու համար բացվում է նոր անձնական հաշիվ, ըստ նրանց կացարանի գտնվելու վայրի՝ համապատասխան համայնքի գրքում: Այդպիսի տնային տնտեսությունների համար՝ «Լրացուցիչ տեղեկություններ» տողում կատարվում են նշումներ. Օրինակ, «Բաժանվել է N...տնտեսությունից» կամ «առանձնացել է N ... տնտեսությունից» և նշվում է նախորդ տնտեսությունից բաժանվելու կամ առանձնանալու մասին առկա փաստաթղթի անվանումը, ամիսը, ամսաթիվն ու տարեթիվը: Միաժամանակ տնային տնտեսությունների «Այբբենական գրքում» (Ձև N 3՝ այբուբենի համապատասխան տառի տակ) անհրաժեշտ է գրանցել նոր կազմված տնային տնտեսության մասին անհրաժեշտ տեղեկությունները, իսկ նախկին տնային տնտեսության համապատասխան տողում՝ տնային տնտեսության առաջինը գրանցված անդամի ազգանվան դիմաց՝ 8-րդ սյունակում գրել «առանձնացել է (նշել տարեթիվը, ամիսը և օրը) N ...տնտեսությունը»:

20. Երկու տնային տնտեսությունները մեկ տնտեսության մեջ միավորվելիս (օրինակ, տնտեսությունների անդամների ամուսնության դեպքում), այդ տնտեսություններից մեկի անձնական հաշիվը պահպանվում է իր նախկին համարով, ընդ որում դրանում ավելացվում են լրացուցիչ գրանցումներ, ինչպես 1-ին բաժնում «Տնային տնտեսության անդամների ցուցակը», այնպես էլ մյուս բաժիններում: «Լրացուցիչ տեղեկություններ» տողում նշվում է «միացել է N ...տնտեսության հետ»: Մյուս տնային տնտեսության անձնական հաշիվը փակվում է, նշելով դրա վերևի մասում «Անձնական հաշիվը փակվել է (ցույց տալ տարեթիվը, ամիսը, օրը) ... տնային տնտեսության հետ միանալու կապակցությամբ»: Այդ տնային տնտեսության անձնական հաշիվը փակելու մասին համապատասխան նշում է կատարվում տնային տնտեսությունների «Այբբենական գրքի» 8-րդ սյունակում:

21. Բոլոր այն դեպքերում, երբ տնտեսության բոլոր անդամները մշտական բնակության են փոխադրվում տվյալ համայնքի սահմաններից դուրս, կամ մահանում են տնային տնտեսության անդամները, տնային տնտեսությունների հաշվառման գրքում անպայման այդ անձնական հաշիվը փակվում է (զճեր են քաշվում) և անձնական հաշվի վերևի մասում, ինչպես նաև տնտեսությունների այբբենական գրքի 8-րդ սյունակում, նշվում է տվյալ անձնական հաշիվը փակելու պատճառը, տարեթիվը, ամիսը և օրը: Փակված անձնական հաշիվների համարները պետք է մնան ազատ: Դրանք չպետք է հատկացվեն մեկ այլ, նոր կազմվող տնային տնտեսության:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐՔՈՒՄ (ՁԵՎ N 1) ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

22. «Համայնքի գիրքը» (Ձև N 1) բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- 1) «ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ».
- 2) «ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ».
- 3) «ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ(ՆԵՐ)Ի ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆ».
- 4) «ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂ».
- 5) «ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ»:

23. Յուրաքանչյուր տնային տնտեսության անդամների ցուցակի վերնամասում՝ գրվում է տնային տնտեսության այն անդամի ազգանունը, անունը և հայրանունը, ով հանդիսանում է տվյալ տնային տնտեսության առաջինը գրանցված անձը (գլխավորը) և որոշվում է տնային տնտեսության անդամների կողմից՝ տնային տնտեսության անդամների ազգակցական կապն արձանագրելու համար, իսկ տնային տնտեսության հասցեն (փողոց, նրբանցք, տուն) լրացվում է 2-րդ՝ «Տնային

տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական կենդանիներ» բաժնի վերնամասում:

24. «Տնային տնտեսության տեսակը» տողում, համապատասխան տարվա հունվարի 1-ի դրությամբ՝ գրառվում է տնտեսության հետևյալ տեսակներից որևէ մեկը.

- 1) Գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվող.
- 2) Այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվող.
- 3) Անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղվող.
- 4) Թռչակառու:

25. Տնային տնտեսության տեսակը սահմանվում է՝ ելնելով տնտեսության առաջինը գրանցված անդամի (գլխավորի) զբաղմունքից:

26. «Տնային տնտեսության անդամների ցուցակ» բաժինը նախատեսված է յոթ անձի համար և եթե տնային տնտեսությունը բաղկացած է յոթից ավելի անձանցից, ապա տնային տնտեսության բոլոր անդամների վերաբերյալ տվյալները լրացնելու համար հատկացվում է անհրաժեշտ քանակով երկու կամ ավելի հաշվառման թերթ, իսկ եթե տնային տնտեսությունը համալրվել է համայնքի գիրքը հիմնելուց հետո, ապա սուսնձվում է լրացուցիչ թերթ (ներդիր):

27. Այս բաժնում տնային տնտեսության առաջինը գրանցված անդամից հետո լրացվում են մնացած բոլոր, ինչպես առկա, այնպես էլ բացակայող անդամների վերաբերյալ պահանջվող տեղեկությունները: Տնային տնտեսության բոլոր անդամների ազգանունը, անունը և հայրանունը պետք է գրել առանց կրճատումների և ընթեռնելի ձեռագրով, օգտագործելով յուրաքանչյուր անդամի համար հատկացված սյունակի բոլոր երեք տողերը:

28. **2-րդ տողում** տնային տնտեսության առաջինը գրանցված անդամի (գլխավորի) համար գրվում է՝ «տնտեսության առաջինը գրանցված (գլխավոր) անդամ», իսկ տնային տնտեսության մնացած անդամների համար լրացվում է նրանց ազգակցական կապը տնտեսության առաջինը գրանցված անդամի (գլխավորի) հետ՝ հայրը, մայրը, կինը, ամուսինը, եղբայրը, քույրը, աղջիկը, տղան և այլն:

29. **3-րդ տողում** լրացվում է անձի սեռը՝ արական կամ իգական:

30. **4-րդ տողում** անհրաժեշտ է համապատասխան փաստաթղթերի հիման վրա (անձնագիր, ծննդյան վկայական) գրել ընտանիքի յուրաքանչյուր անդամի ծննդյան օրը, ամիսը, տարին, այլ ոչ թե տարիքը:

31. **5-րդ տողում** գրվում է այն ազգությունը, որին դասում է իրեն տվյալ անձը: Երեխաների ազգությունը որոշում են ծնողները կամ նրանց փոխարինող անձինք:

32. **6-րդ տողում** համապատասխան փաստաթղթերի հիման վրա գրվում է տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը (բարձրագույն, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական, միջնակարգ հանրակրթական, հիմնական հանրակրթական, տարրական հանրակրթական, չունի տարրական, գրաճանաչ չէ): Անձի կրթական մակարդակը որոշվում է համապատասխան կրթական ծրագիրն անցելու և նրա ավարտը հավաստող փաստաթղթի համաձայն: Եթե անձը դպրոցն ավարտելուց հետո սովորում է բարձրագույն ուսումնական հաստատությունում և դեռ չի ավարտել այն, ապա նրա կրթական մակարդակը համարվում է՝ միջնակարգ հանրակրթական, կամ եթե անձը սովորում է մագիստրատուրայում (ասպիրանտուրայում), ապա նրա կրթական մակարդակը կլինի՝ բարձրագույն:

1) **Բարձրագույն** գրվում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա, ինչպես նաև բակալավրատուրա, մագիստրատուրա, ինտերնատուրա, ասպիրանտուրա, օրդինատուրա ավարտած և համապատասխան որակավորման դիպլոմ ստացած անձանց համար:

2) **Միջին մասնագիտական** գրվում է տեխնիկում, քոլեջ կամ դրանց հավասարեցված (մանկավարժական, բժշկական ուսումնարան և այլն) այլ պետական և ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ավարտած և միջին մասնագիտական որակավորում ստացած անձանց համար:

3) **Նախնական մասնագիտական** գրվում է հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական կրթություն ստացած (արհեստագործական, պրոֆտեխնիկական, ճյուղային պրոֆեսիոնալ, տեխնիկական ուսումնարաններ ավարտած) անձանց համար:

4) **Միջնակարգ հանրակրթական** գրվում է միջնակարգ հանրակրթական դպրոց (այդ թվում առանձին առարկաների խորացված ուսուցմամբ), վարժարան, գիմնազիա և միջնակարգ հանրակրթական ուսումնական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններ ավարտածների համար:

5) **Հիմնական հանրակրթական** գրվում է հիմնական հանրակրթական դասընթաց ավարտած և համապատասխան ավարտական վկայական ստացած անձանց համար:

6) **Տարրական հանրակրթական** գրվում է տարրական դասընթացն ավարտածների համար: Տվյալ ենթակարգը ներառում է տարրական կրթության բնագավառում աշակերտների հիմնարար գիտելիքների՝ ընթերցանության, գրի, թվաբանության, այլ առարկաների ընդհանուր իմացության ուսուցումը:

7) **Չունի տարրական** գրվում է տարրական կրթություն չունեցող, սակայն որևէ լեզվով գրել, կարդալ կամ միայն կարդալ իմացող անձանց համար:

8) **Գրաձանաչ չէ** գրվում է ինը և բարձր տարիքի այն անձանց համար, ովքեր չեն կարող կարդալ:

33. Սովորողների համար **7-11-րդ տողերը** լրացվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ տնային տնտեսություններում համատարած շրջագայություն կատարելու ժամանակ՝ նշելով ուսումնական հաստատության անվանումը, նրա գտնվելու վայրը և դասարանը կամ կուրսը, որում սովորում է: Օրինակ՝ քաղաք Մարտունի, N 1 միջնակարգ դպրոց, 5-րդ դասարան, Արցախի պետական համալսարան, 2-րդ կուրս: Տնային տնտեսության այն անդամների համար, ովքեր ոչ մի տեղ չեն սովորում կամ սովորում են միայն մեկ տարուց պակաս տևողությամբ դասընթացներում կամ պարապում են խմբակներում, 7-11-րդ տողերում ոչ մի նշում չի կատարվում:

34. **12-րդ տողում** գրվում է հիմնարկի, կազմակերպության անվանումը, որտեղ աշխատում է տվյալ անձը: Կազմակերպություններում աշխատողների համար լրացվում է նաև կազմակերպության գտնվելու վայրը (քաղաք, գյուղ): Օրինակ՝ քաղաք Մարտունի, «Մարտունու շրջանային բուժմիավորում» ՓԲԸ, գյուղ Գետավան, «Գլաձոր» ՍՊԸ: Գյուղացիական տնտեսությունում զբաղվածների համար այս տողում լրացվում է «գյուղացիական տնտեսություն», կամ «կոլեկտիվ գյուղացիական տնտեսություն»: Անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղված անձանց համար լրացվում է «անհատական աշխատանքային գործունեություն»: Վարձակալությամբ աշխատողների համար նշվում է այն կազմակերպությունը կամ տնային տնտեսությունը, որտեղ պայմանագրով աշխատում են: Հիմնական աշխատանք չունեցող և սեզոնային աշխատանք կատարող, ինչպես նաև տարբեր տեսակի աշխատանքներ կատարող անձանց համար լրացվում է վերջին ժամանակահատվածում աշխատանքի վայրը: 12-րդ տողում ցույց է տրվում նաև տվյալ անձի կողմից կատարվող աշխատանքը կամ նրա զբաղմունքը՝ օրինակ, անասնապահ, շինարար, տրակտորիստ, հաշվապահ և այլն:

35. **13-16-րդ տողերում** կատարվում են նշումներ աշխատանքի հետագա (2022-2025 թվականների) փոփոխությունների մասին՝ համայնքի գրքերում գրանցումների համատարած ստուգման և ճշգրտման ժամանակ:

36. **17-26-րդ տողերում** «Նշումներ տնային տնտեսության բացակայող անդամների մասին» գրանցումները կատարվում են հետևյալ կարգով.

1) **17-րդ տողում** մեկնելու վերաբերյալ նշումը կատարվում է այն անձանց համար, ովքեր բացակայում են տնտեսությունների գրքեր հիմնելու պահին կամ առաջին անգամ են մեկնում այդ գրքերը հիմնելուց հետո.

2) **18-րդ տողում** կատարվում է այդ անձանց վերադառնալու վերաբերյալ նշումը.

3) **19-22-րդ տողերը** լրացվում են միայն տնտեսության անդամի կրկին մեկնելու և տնտեսություն վերադառնալու դեպքում.

4) **17-26-րդ տողերում** նշվում են մեկնելու կամ վերադառնալու ամսաթիվը, ինչպես նաև մեկնելու պատճառը: Օրինակ՝ «ամուսնացել է 2022 թվականի մայիսին», «սովորելու՝ 2024 թվականի օգոստոսին»:

37. Գրանցումները կատարվում են տնային տնտեսությունների համատարած շրջագայության ժամանակ (հունվարի 1-ի դրությամբ):

38. **Բացակայողներ են համարվում** համայնքի տարածքից դուրս բնակվող հետևյալ անձինք.

1) բարձրագույն մասնագիտական, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, հանրակրթական ուսումնական հաստատություններում, տարբեր ուսումնարաններում սովորողները, ովքեր ուսումնառության ժամանակաընթացքում բնակվում են ուսումնական հաստատության գտնվելու վայրում (հանրակացարաններում, առանձին անձանց բնակարաններում, դպրոցներին կից ինտերնատներում)։

2) համայնքի տարածքից դուրս աշխատող և ըստ աշխատանքի վայրի ժամանակավոր բնակվող անձինք։

3) ժամկետային զինվորական ծառայության գորակոչված անձինք։

4) ազատագրկման վայրերում գտնվող անձինք։

5) համայնքում հաշվառված (գրանցված) կենվորները, ովքեր փաստացի բնակվում են այլ բնակավայրերում։

39. **27-րդ տողը** լրացվում է տնային տնտեսության կազմից վերջնականապես հեռացած անդամների համար՝ նշվում է մեկնելու ամիսը, տարին և պատճառը: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, թե տվյալ անձը բնակության վայրը փոխել է քաղաքային կամ գյուղական համայնքի տարածքում, թե համայնքի տարածքից դուրս: Օրինակ՝ «Մեկնել է ամուսնության կապակցությամբ N.....տնտեսություն 2021 թվականի սեպտեմբերին», «Մեկնել է քաղաք Մարտակերտ՝ աշխատանքի նոր վայրը 2023 թվականի մարտին»: Միաժամանակ տնային տնտեսության անձնական հաշվում ընտանիքի մեկնած կամ մահացած անդամի գրանցումներով սյունակի վրա գիծ է քաշվում: Մեկնելու մասին նշումը կատարվում է տարվա ընթացքում և ստուգվում հունվարի 1-ի դրությամբ՝ տնային տնտեսությունների համատարած շրջագայության ժամանակ:

40. Քաղաքային կամ գյուղական համայնքից բացակայող՝ **17-26-րդ** և վերջնականապես հեռացած անձանց մասին՝ **27-րդ տողերում** ճշգրիտ, ամբողջական և ժամանակին կատարված գրառումները հիմք են հանդիսանում համայնքի բնակչության թվաքանակի և կազմի մասին տարեսկզբի դրությամբ վիճակագրական տվյալների ստացման համար:

41. Ծնվածների և մահացածների մասին նշումները կատարվում են ամբողջ տարվա ընթացքում՝ ծնունդների և մահվան դեպքերի մասին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից տրված համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Ծնվածների համար՝ **4-րդ տողում**, իսկ մահացածների համար՝ **27-րդ տողում** լրացվում է, համապատասխանաբար, ծննդյան կամ մահվան օրը, ամիսը և տարին, նշվում է ծննդի կամ մահվան վերաբերյալ գրանցման ակտի համարը:

42. **28-րդ տողը** լրացվում է համայնքի տարածք մշտական բնակության ժամանած անձանց համար: Օրինակ՝ «Ժամանել է 10.08.2022 թվականի Մարտունի քաղաքից»: Ընդ որում, **28-րդ տողում** նշում չի կատարվում՝ տվյալ համայնքի մեկ տնային տնտեսությունից մեկ այլ տնտեսություն տեղափոխված անձի և նախկինում «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակում» (Ձև N 2) հաշվառված անձի համար, եթե վերջինս տեղափոխվել է տվյալ համայնք մշտական բնակության: Տվյալ համայնք նոր ժամանածների վերաբերյալ գրառումները համայնքի գրքում կատարվում են տարվա ընթացքում՝ Արցախի Հանրապետության ոստիկանության տարածքային անձնագրային բաժիններից ստացված տեղեկանքների հիման վրա և ստուգվում համատարած շրջագայության ժամանակ:

43. **29-րդ տողում** գրանցումներ են կատարվում ծերության, հաշմանդամության (նշելով հաշմանդամության խումբը) աշխատանքային կենսաթոշակառուների, նպաստառուների և այլնի վերաբերյալ: Նշումը կատարվում է կենսաթոշակի գրքույկի կամ տվյալ անձը հաշմանդամության համապատասխան կարգին դասելու վերաբերյալ սոցիալական ապահովագրության պետական մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա: Օրինակ՝ Ծերության կենսաթոշակառու, Հայրենական պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ, Աշխատանքի 2-րդ խմբի հաշմանդամ, պետական նպաստ և այլն:

44. **2-րդ բաժնում «Տնային տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական կենդանիներ»** գյուղատնտեսական կենդանիների և մորթատու գազանների գլխաքանակի մասին տվյալները գրանցվում են կենդանիները փաստացի հաշվելու միջոցով, տնտեսության առաջինը գրանցված անդամի (գլխավորի), կամ ընտանիքի չափահաս անդամի ներկայությամբ:

1) **ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆՏՐԱՆԻՆԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ** (գլուխ) տողում լրացվում է ընդամենը խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը.

ա. **որից՝ կովեր** տողում լրացվում է կթու և կերակրող կովերի գլխաքանակը.

բ. **ցուլեր** տողում լրացվում է արու կենդանիների գլխաքանակը.

գ. **երինջներ՝ 1-ից մինչև 2 տարեկան** տողում լրացվում է 1-ից 2 տարեկան դեռ չծնած, եգ խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը.

դ. **երինջներ 2 տարեկանից բարձր** տողում լրացվում է 2 տարեկանից բարձր դեռ չծնած, եգ խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը.

ե. **գոմեշներ** (գլուխ) տողում լրացվում է գոմեշների ընդամենը գլխաքանակը:

2) **ԽՈՋԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ** (գլուխ) տողում լրացվում է ընդամենը խոզերի գլխաքանակը.

ա. **որից՝ մայր խոզեր հիմնական հոտի** տողում լրացվում է հիմնական և ստուգված խոզամայրերի գլխաքանակը:

3) **ՈՉԽԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՑԵՂԵՐԻ, ԸՆԴԱՄԵՆԸ** (գլուխ) տողում լրացվում է ընդամենը բոլոր ցեղերի ոչխարների գլխաքանակը.

ա. **որից՝ մաքիներ** տողում լրացվում է նրբագեղմ, կիսանրբագեղմ, կիսակոպտաբուրդ և կոպտաբուրդ ցեղերի մաքիների գլխաքանակը:

4) **ԱՅՑԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ** (գլուխ) տողում լրացվում է ընդամենը այծերի գլխաքանակը.

ա. **որից՝ մայր այծեր** տողում լրացվում է 1 տարեկանից բարձր այծերի գլխաքանակը:

5) **ՁԻՆԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ** (գլուխ) տողում լրացվում է ընդամենը ձիերի գլխաքանակը.

ա. **որից՝ զամբիկներ 3 տարեկան և ավելի** տողում լրացվում է 3 տարեկան և ավելի զամբիկների գլխաքանակը:

6) **ՃԱԳԱՐՆԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ** (գլուխ) տողում լրացվում է ընդամենը ճագարների գլխաքանակը.

ա) **որից՝ մայր ճագարներ** տողում լրացվում է ընդամենը մայր ճագարների գլխաքանակը:

7) **ԹՈՉՈՒՆՆԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ** (գլուխ) տողում լրացվում է ընդամենը թռչուններ գլխաքանակը.

ա. **որից՝ ածան հավեր** տողում լրացվում է մեծահասակ հավերի գլխաքանակը, անկախ նրանից տվյալ պահին այդ հավերից ձու ստացվում է թե ոչ:

8) **ՄՈՐԹԱՏՈՒ ԳԱԶԱՆՆԵՐ** (գլուխ) տողում լրացվում է բոլոր տեսակի մուշտակամորթ գազանների գլխաքանակը.

ա. **որից՝ մայրեր** տողում լրացվում է բոլոր տեսակի մուշտակամորթ մայր գազանների գլխաքանակը:

9) **ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐ** (հատ) տողում լրացվում է ընդամենը մեղվա-ընտանիքների թվաքանակը.

10) **10-11 տողերում** լրացվում է համապատասխանաբար՝ **ավանակների և ջորիների** ընդամենը գլխաքանակը: Եթե տվյալ տնային տնտեսությունում խնամվում է գյուղատնտեսական կենդանի, որը պատկանում է տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի տարածքում չբնակվող անձի, ապա այդ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը գրանցվում է այն տնտեսության հաշվին, որտեղ խնամվում է, ինչի վերաբերյալ կարելի է համապատասխան նշումներ կատարել «Լրացուցիչ տեղեկություններ» տողում:

45. **3-րդ բաժնում «Տնային տնտեսության անդամ(ներ)ի բնակելի տուն և բնակարան»** տվյալները լրացվում են համաձայն բնակելի տան հատակագծի, կամ անձնագրի թիվ 2 կետի, իսկ դրանց բացակայության դեպքում կամ հատակագծից շեղման դեպքում անմիջական չափումների միջոցով և ցույց է տրվում ամբողջական քառակուսի մետրերով: Ընդհանուր մակերեսը հաշվարկվում է բնակելի սենյակների և օժանդակ տարածությունների մակերեսների գումարով.

1) **Բնակելի տան ընդհանուր մակերեսի մեջ ներառվում է.**

ա. ամբողջ տարածքը, որը գտնվում է բնակելի տան հիմնապատերի սահմանում՝ բնակելի սենյակների (ընդհանուր սենյակի և ննջարանների) և օժանդակ տարածությունների մակերեսների (խոհանոց, նախասենյակ, միջանցք, լոդարան կամ ջրացնցուղ, գուգարան, նկուղ, պատի ներսում կառուցված պահարան, մառան).

բ. ջեռուցվող, ամբողջ տարվա ընթացքում բնակության համար պիտանի տարածությունը, տանը կից կառուցված բնակատեղը (պատշգամբ և շինված

ծածկապատշգամբ և այլն), ինչպես նաև ջեռուցվող, բնակության համար պիտանի ձեղնահարկը, կիսավերնահարկը: (Ձեղնահարկ՝ տան ընդհանուր ծածկի տակ գտնվող բնակատուն, կառուցված կտուրի և ծածկի արանքի տարածության չափով կիսավերնահարկ՝ վերնակառույց, բնակելի տան ընդհանուր տարածքից, որի մակերեսը պարտադիր փոքր է ներքնի հարկի մակերեսից և ունի նրա հետ ներքին կապ): Եթե տնային տնտեսությունն ունի երկու բնակելի տուն, ապա 3-րդ բաժնի առաջին պլանակում պետք է գրանցել յուրաքանչյուր տան տեղեկությունը՝ համարիչում առաջին տան համար, հայտարարում՝ երկրորդ:

2) **Ընդհանուր մակերեսի մեջ չեն ներառվում** հետևյալ տարածքները՝

ա. երկու և ավելի հարկ ունեցող բնակելի տների, աստիճանավանդակների մակերեսը.

բ. չջեռուցվող ծածկապատշգամբների, ձեղնահարկերի, կիսավերնահարկերի մակերեսները.

գ. առանձին շինություն հանդիսացող խոհանոցի, բաղնիքի, ցախատան, տաղավարի և այլնի մակերեսները:

46. Բազմաբնակարան բնակելի շենքը մեկից ավելի առանձին բնակարաններ ունեցող կառույց է: Բնակարանը շենքում գտնվող առանձին տարածք է՝ բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, կահավորված է կոմունալ հարմարություններով: Բազմաբնակարան շենքերի բնակարանի ընդհանուր մակերեսը որոշվում է բնակելի և օժանդակ մակերեսների (խոհանոց, միջանցք, բաղնիք, զուգարան, պահարան, խորդանոց, տաքացվող և բնակության համար պիտանի ձեղնահարկ, կիսավերնահարկ և այլն) գումարով.

1) **Բազմաբնակարան շենքի բնակարանի ընդհանուր մակերեսի մեջ չեն ներառվում**՝

ա. աստիճանավանդակների, նախամուտքերի, վերելակի զբաղեցրած մակերեսները, չտաքացվող ծածկապատշգամբների, ձեղնահարկերի, կիսավերնահարկերի մակերեսը,

բ. առանձին կառուցված ամառային խոհանոցների, բաղնիքների, խորդանոցների մակերեսը,

գ. ոչ բնակելի մակերեսը, որը զբաղեցված է համայնքների, խանութների, պոլիկլինիկաների, դեղատների, խնայողամարկղերի, կապի բաժանմունքների, մանկական հիմնարկների, կենցաղձառայությունների և այլնի կողմից:

47. **4-րդ բաժնի «Տնային տնտեսության սեփականություն հանդիսացող հող» Ա ենթաբաժնում** յուրաքանչյուր տնտեսության համար գրառվում է նրան պատկանող ամբողջ հողատարածքը, ներառյալ տնամերձ հողը, որը տվյալ տնտեսությանը տրված է սահմանված կարգով:

48. Հողաբաժինների չափերի վերաբերյալ տվյալներն ըստ առանձին հողատեսքերի՝ վարելահող, բազմամյա տնկարկ, արոտավայր, խոտհարք և տնամերձ հող, վերցվում են կադաստրային (հողակադաստրային) գրքից:

49. **4-րդ բաժնի Բ ենթաբաժնում** գրանցվում են տնային տնտեսության առաջինը գրանցված անդամի (գլխավորի), կամ չափահաս անդամի կողմից տրված տվյալները գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի չափերի վերաբերյալ, ներառյալ տնամերձը, հեկտարներով (հարյուրերորդական հեկտարի ճշտությամբ): Համայնքի գրքի հիմնման ժամանակ ցանքային տարածությունները, առ 01.06.2020 թվականի պլանակում, գրանցվում են 2020 թվականի բերքի տակ կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքների չափերի մասին տեղեկությունները:

50. Այգիների միջշարային տարածություններում ցանված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքը ներառվում է համապատասխան մշակաբույսի և ընդհանուր ցանքի քանակի մեջ:

51. Շարահերկ մշակաբույսերի շարքերի մեջ կատարված լրացուցիչ, ինչպես նաև, կրկնակի կատարած ցանքը ցանքատարածությունների ընդհանուր քանակի մեջ չի ներառվում:

52. **«Հացահատիկային և հատիկաընդդեմային մշակաբույսեր»** տողով ցույց է տրվում զարնանացանի ավարտին պահպանված աշնանացանի (ցորեն, տարեկան, գարի) և զարնանացան հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ, հաճար, հացազգիների խառնուրդ, եգիպտացորեն հատիկի համար, կորեկ, սորգո հատիկի համար, հատիկաընդդեմներ), ցանքային տարածությունները: Հացահատիկային և հատիկաընդդեմային մշակաբույսերի ցանքային

տարածությունները որոնցից հավաքված բերքը նախատեսվում է օգտագործել անասնակերի (կանաչ կերի, խոտի) համար այդ տողով ցույց չի տրվում:

1) «**Կարտոֆիլ**» տողում ցույց է տրվում կարտոֆիլի ցանքին հատկացված ամբողջ տարածությունը, անկախ ցանքի ժամկետից և նպատակից:

2) «**Բանջարեղեն**» տողով ցույց է տրվում բոլոր, ինչպես բաց այնպես էլ փակ գրունտի (ջերմոցներ, ջերմատներ), բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները:

3) **4-րդ բաժնի Գ ենթաբաժնում «Պտղի և հատապտղի տնկարկիների տարածությունները, ընդամենը»** տողով ցույց է տրվում բոլոր տեսակի պտղի և հատապտղի տնկարկների տակ գտնվող ամբողջ տարածությունը, ներառյալ տնամերձը:

4) **4-րդ բաժնի Դ ենթաբաժնում «Խաղողի տնկարկիների տարածությունները, ընդամենը»** տողով ցույց է տրվում բոլոր տեսակի խաղողի այգիների տակ գտնվող ամբողջ տարածությունը, ներառյալ տնամերձը:

5) **4-րդ բաժնի Ե ենթաբաժնում «Թթի տնկարկիների տարածությունները, ընդամենը»** տողով ցույց է տրվում բոլոր տեսակի թթենու տակ գտնվող ամբողջ տարածությունը, ներառյալ տնամերձը:

6) **4-րդ բաժնի Չ ենթաբաժնում «Այլ տարածությունները, ընդամենը»** տողով ցույց է տրվում բոլոր տեսակի տեխնիկական, կերային և այլ մշակաբույսերի ցանքատարածությունը, ներառյալ տնամերձը:

53. **5-րդ բաժնում «Տնային տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղտեխնիկա»** լրացվում են տվյալներ՝ տնային տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղտեխնիկայի քանակի և սարքիության վիճակի մասին: Եթե տվյալ տնային տնտեսությունում առկա է գյուղտեխնիկա, որը պատկանում է տվյալ համայնքի տարածքում չբնակվող անձի, ապա այդ գյուղտեխնիկան գրանցվում է այն տնտեսության հաշվին, որտեղ գտնվում է, ինչի վերաբերյալ կարելի է համապատասխան նշումներ կատարել «Լրացուցիչ տեղեկություններ» տողում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿՈՒՄ (ՁԵՎ N 2) ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

54. Քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը յուրաքանչյուր տարի հունվարի 1-ի դրությամբ պարտադիր պետք է կազմի «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակ» (Ձև N 2): Ցուցակում ժամանակավոր բնակվողների գրանցումը կատարվում է տարվա ընթացքում պարբերաբար նույնպիսի ճշգրտությամբ, ինչպես մշտապես բնակվող բնակչությանը: Ժամանակավոր բնակվող բնակչության թվաքանակում հաշվի է առնվում 1,5 ամսից ավելի ժամկետով համայնքի տարածք ժամանած հետևյալ բնակիչները:

1) սովորողները, ովքեր ուսման շրջանում բնակվում են ուսումնական հաստատության գտնվելու վայրում (ուսումնական հաստատությունների հանրակացարաններում, մասնավոր բնակարաններում և այլն),

2) մանկատների սաները,

3) ժամանակավոր և սեզոնային աշխատանքի, ինչպես նաև պայմանագրով աշխատանքի եկած անձինք,

4) այլ համայնքում հաշվառված (գրանցված), բայց փաստացի տվյալ համայնքի տարածքում բնակվող անձինք,

5) զինծառայողների ընտանիքները, որոնք եկել են զինծառայողի ծառայության վայրը և բնակվում են համայնքի բաց տարածքում:

55. Ժամանակավոր բնակվող անձանց կատեգորիային պետք է դասել օտարերկրյա քաղաքացիներին, ովքեր եկել են քաղաքային կամ գյուղական համայնք սեզոնային կամ ժամանակավոր աշխատանքի, ինչպես նաև այն անձանց, ովքեր ազատագրվման վայրից պայմանական ազատվել են և որոշակի ժամանակ բնակվում են համայնքի տարածքում:

56. Ժամանակավոր բնակվող անձանց կատեգորիան որոշելու համար ժամանակավոր բնակության ժամկետ, որպես չափանիշ չի սահմանվում ու որոշվում է աշխատանքը, բուժումը, ուսումը, և այլն սկսելու և ավարտելու ժամանակով:

57. Համայնքի տարածքում մանկական խնամատարական հիմնարկի, դպրոց-ինտերնատի, տարեցների և հաշմանդամների սոցիալական հիմնարկի առկայության

դեպքում դրանցից յուրաքանչյուրի համար կազմվում է ժամանակավոր բնակվող անձանց վերաբերյալ առանձին ցուցակ՝ տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից տրամադրած տեղեկատվության հիման վրա: Ցուցակի կազմի վրա ցույց է տրվում կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը:

58. Ամառանոց վարձակալող անձինք և համայնքի տարածքում գտնվող ամառանոցների սեփականատերերը (կառուցողները), ովքեր հաշվառված (գրանցված) են և մշտապես բնակվում են քաղաքային բնակավայրերում, տնտեսությունների հաշվառման փաստաթղթերում չեն հաշվառվում:

59. Ժամանակավոր բնակվողների գրանցումը կատարվում է նրանց համայնքի տարածք գալուց հետո՝ երեք օրվա ընթացքում: Ընդ որում, եթե ժամանակավոր եկվորները տնային տնտեսություններով են ժամանել տվյալ քաղաքային կամ գյուղական համայնք, ապա ցուցակում լրացվում են տնային տնտեսության բոլոր անդամների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները:

60. Ժամանակավոր բնակվող անձանց համար ցուցակի սյունակներում տվյալները լրացվում են այնպես, ինչպես «Համայնքի գրքի» (Ձև N 1) համապատասխան տվյալները:

1) **6-րդ սյունակում** նշվում է անձի մշտական բնակության վայրը, օրինակ՝ ք. Մարտակերտ, Ազատամարտիկների փ., տուն 2.

2) **7-րդ սյունակում** նշվում է տվյալ անձի աշխատանքի վայրը մշտական բնակավայրում և զբաղմունքը (մասնագիտությունը), օրինակ՝ ք. Ստեփանակերտ, N 3 միջնակարգ դպրոց, ուսուցիչ, խնամքի տակ գտնվողների համար այդ սյունակում պետք է գրել, խնամքի տակ:

3) **8-րդ սյունակում** լրացվում է, թե ե՞րբ և որտեղի՞ց է եկել տվյալ անձը, օրինակ՝ մայիս 2021 թվական, ք.Ստեփանակերտից, ապրիլ 2022 թվական, Մարտակերտի շրջանի Վանք գյուղից:

4) **9-րդ սյունակում** գրանցվում են տվյալ անձի կողմից տնօրինվող գյուղատնտեսական կենդանիների տեսակները՝ **խոշոր եղջերավոր կենդանիներ**, որից՝ **կովեր, ցուլեր, երինջներ, գոմեշներ, խոզեր**, որից՝ **մայր խոզեր հիմնական հոտի, ոչխարներ**, որից՝ **մաքիներ, այծեր**, որից՝ **մայր այծեր, ձիեր**, որից՝ **զամբիկներ երեք տարեկան և ավելի, ճագարներ**, որից՝ **մայր ճագարներ, թռչուններ**, որից՝ **ածան հավեր, մորթատու զագաններ, մեղվաընտանիքներ, ավանակներ և ջորիներ**:

5) **10-րդ սյունակում** լրացվում է 9-րդ սյունակում թվարկված գյուղատնտեսական կենդանիների յուրաքանչյուր տեսակի և խմբի գլխաքանակը:

6) **11-րդ սյունակում** լրացվում է այն տնային տնտեսության անձնական հաշվի համարը, որում բնակվում է ժամանակավոր բնակվող անձը կամ հակիրճ գրվում է ժամանակավոր բնակության հասցեն:

7) **12-րդ սյունակում** տնային տնտեսության առաջինը գրանցված անդամը (գլխավորը) կամ միայնակը իրենց/իր մասին կատարված գրանցումներին ծանոթանալուց հետո վավերացնում է այն ստորագրությամբ: Մանկական խնամատարական, տարեցների և հաշմանդամների սոցիալական հիմնարկներում և այլուր բնակվող անձանց մասին կատարած գրանցումների ճշգրտությունը վավերացվում է այդ հիմնարկների ղեկավարների ստորագրությամբ:

8) **13-րդ սյունակում գրառումներ** կատարվում են այն անձանց համար, ովքեր մեկնել են համայնքից, անցել են մշտական բնակության տվյալ համայնքում, ինչպես նաև մահացածների համար՝ նշելով տվյալ անձի դուրս գրման ամիսը, տարին և պատճառը:

5. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

61. Համայնքի բոլոր բնակավայրերում համայնքի գրքերը հիմնելուց հետո, քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, փետրվարի 10-ից ոչ ուշ, կազմում է տնային տնտեսությունների «Այբբենական գիրքը» (Ձև N 3): Այս գրքում գրանցվում են համայնքի տարածքում մշտապես բնակվող բոլոր տնային տնտեսությունները, որոնք գրանցված են «Համայնքի գրքում» (Ձև N 1): Ժամանակավոր բնակվող անձինք տնային տնտեսությունների «Այբբենական գրքում» չեն գրանցվում, այլ միայն Ձև N 2 ցուցակում:

62. Քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվում է տնային տնտեսությունների քանակն ըստ տնային տնտեսության տեսակների և հաշվառման արդյունքները գրանցում տնային տնտեսությունների «Այբբենական գրքի» անվանաթերթի աղյուսակում:

63. Համայնքի գրքերում տնային տնտեսությունների անձնական հաշիվներում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք վերաբերում են տնտեսության առաջինը գրանցված անդամին, տնտեսության տեսակին և տնտեսության կազմին՝ քաղաքապետարանի կամ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը տարվա ընթացքում կատարում է տնային տնտեսությունների «Այբբենական գրքում»:

Համաձայնեցված է
Ա.Ն պետական նախարար, ֆինանսների նախարար
Գ. Մարտիրոսյան
« 15 » փետրվարի 2021 թվական

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2021 թվականի փետրվարի 15-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 13-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 14-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2017 թվականի մարտի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող արխիվագիտական ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգը և գնացուցակը հաստատելու մասին» N 13-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի վերնագրում, տեքստում, հավելվածներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական արխիվ» բառերով,

2) հրամանով հաստատված N 1 հավելվածի 6-րդ և 7-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող զինծառայողների ընտանիքներին, առաջին խմբի հաշմանդամներին և Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառում ունեցող Արցախի Հանրապետության քաղաքացիներին՝ համապատասխան փաստաթղթերի պատճենների առկայության դեպքում, արխիվագիտական ծառայությունները մատուցվում են անվճար:

7. Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախի Հանրապետության պաշտպանության մասնակիցներին, նրանց հավասարեցված անձանց, երկրորդ և երրորդ խմբերի հաշմանդամներին արխիվագիտական ծառայությունները մատուցվում են 50 տոկոս զեղչով՝

համապատասխան վկայականի պատճենի առկայության դեպքում, որը կցվում է դիմումին: Եթե տեղեկությունը հայտնաբերել է օգտվողը (ընթերցասրահում), ապա տեղեկանք տրամադրելիս կատարվում է 50 տոկոս զեղչ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

2021 թվականի փետրվարի 15
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

25 հունվարի 2021թ.

N 08

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 21-ի N369-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.Դադարեցնել՝

1) **անհատ ձեռնարկատեր Ռոմեն Սուրենի Հարությունյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ000158 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

2) **անհատ ձեռնարկատեր Մերգեյ Սամվելի Առաքելյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ000258 լիցենզիայի և լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունները:

3) **անհատ ձեռնարկատեր Էդուարդ Ասծատուրի Վանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ000279 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հ. ԽԱՆՈՒՄՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

04 փետրվարի 2021թ.

N 15

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 01-ի N370-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.Դադարեցնել՝ ֆիզիկական անձ Սլավիկ Երվանդի Ավանեսյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON000447 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հ. ԽԱՆՈՒՄՅԱՆ